

Մեկ ժամից ավելի կարդում է մի տեքստ, որտեղ գրված է, թե քանի մետր ասֆալտ արվեց, քանի մետր ջրագիծ փոխվեց, որ ճանապարհն ասֆալտապատվեց: Եթե այսպես գնա, Փաշինյանը կարող է կառավարության նիստերի ժամանակ կարդալ, թե որ խոզանոցի կամ գոմի տանիքը վերանորոգվեց, ցանկապատը կարգի բերվեց, կամ քանի տուկ խոտ մթերվեց:

Կարդացեք՝ էջ 5

2025թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ մարզում կատարվել է 1749,0 հա աշնանացան, այդ թվում՝ Բերդ համայնքում - 777,2 հա, Նոյեմբերյան համայնքում - 671,6 հա, Իջեւան համայնքում- 300,2 հա՝ հաղորդում են Տավուշի մարզպետարանից: Իսկ 2016 թվականին Տավուշի մարզում աշնանացան ցորենի ցանքերը կազմել են 5684 հեկտար:

Կարդացեք՝ էջ 7

Դուք տեսել էիք երբեւէ, որ պադավատ եւ «Բենթլի» ունեցող 10 եպիսկոպոս լցվեին գազելն ու գնային Մայր Աթոռ: Գնալը՝ դեռ ոչինչ, դուք խմբով վազող եպիսկոպոսներ տեսել էիք: Իհարկե, աննախադեպ էր: Չզարմանաք, ուրեմն, որ առաջիկա կիրակի Նիկոլը եպիսկոպոսների հետ գնա հեծանիվ քշելու: Դա նույնպես աննախադեպ կլինի:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 209 (4110), 20 դեկտեմբեր, շաբաթ, 2025

Հրապարակ

www.hraparak.am

Այր Աթոռի դեմ 10 տիրադավ եպիսկոպոսների թիկունքում թաքնված իշխանականների ձախողված գրոհից հետո Նիկոլ Փաշինյանը, ասում են, ուղղակի դիվոտել է եւ շան լափ թափել մարզպետների, մասնավորապես՝ Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանի վրա, որի ուսերին է դրված եղել իր մարզում տեղի ունեցող միջոցառման «մասսովկան» ապահովելու գործը: Սակայն մեծ խումբ մարզպետների ու համայնքապետերի ջանքերի գնով կարողացել էին հազիվ մի քանի հարյուր մարդ բերել՝ տարբեր մարզերից, որոնց գերակշիռ մասը տեսախցիկներից թաքնվում էր, ծածկում դեմքը, հրաժարվում խոսել, քանի որ պարտադրված էին եկել Էջմիածին՝ հիմնականում աշխատանքը չկորցնելու համար: Մեզ պատմեցին, որ չնայած ի սկզբանե ասվել է, որ իշխանական պաշտոնյաներ չպետք է մասնակցեն գրոհին, որ տպավորություն լինի, թե իշխանությունը կապ չունի այդ միջոցառման հետ՝ հոգեւորականներն են ժողովրդի հետ կաթողիկոսի հարցերը փորձում լուծել, սակայն հասկանալով, որ բան դուրս չի գալիս, որոշ մարզպետներ, օրինակ՝ Արմավիրի, Գեղարքունիքի, եկել են եկեղեցու բակ: Իշխող թիմում վստահ են, որ Արմավիրի մարզպետի պաշտոնավարման օրերն էլ են հաշված, եթե Փաշինյանը Յոթ վերքի խայտառակ պատարագի համար որոշել է հանել մարզպետ Դավիթ Առուշանյանին, ապա այս ճակատագրական «մարտի» համար Վահրամ Խաչատրյանին էլ չի խնայելու:

Մեկ ամիս էլ չկա, որ «Քաղպայմանագիրն» ընդունել է էթիկայի կանոնագիրք, եւ Նիկոլ Փաշինյանի մակարդակով վստահեցրել են, որ էլ հայհոյանքին հայհոյանքով չեն պատասխանելու, չեն վիրավորելու, մնալու են էթիկայի սահմաններում: Անգամ Փաշինյանը զգուշացրեց, որ համարժեք պատասխան չտալու հանգամանքը թուլություն չգնահատեն, քանի որ, ինչպես ասաց, ՔՊ-ն, «որպես կառավարող ուժ, պատասխանատվություն է զգում երկրում քաղաքական միջավայրի, մթնոլորտի, կուլտուրայի զարգացման գործում»: Սակայն Թալինի քաղաքապետ Տավրոս Սափեյանը երեկ Մայր Աթոռի բակում մի քանի անգամ թքեց այդ կանոնագրքի վրա՝ նա աջ ու ձախ հայհոյում էր, իրեն պահում շարքային խուլիգանի պես, վիրավորում զոհված զինվորի ծնողին, հոգեւորականին, մագլցում մայր տաճարի պատերին: Հիմա մենք կհամոզվենք, թե որքանով է ՔՊ կուսակցությունը հավատարիմ իր կանոնագրքին, իսկ Նիկոլ Փաշինյանը՝ իր խոսքին: Կստանա՞ Սափեյանը խիստ պատիժ՝ հանրային վայրում հայհոյելու, անպարկեշտ պահվածք դրսեւորելու համար, թե՞ ոչ՝ երեկ կուսակցությունից չկարողացանք ճշտել:

Անձի երկվություն

«10 եպիսկոպոսների գործողությունները ես չեմ ուղղորդում, բայց աջակցում եմ», «ՀԱԵ բարեկարգման օրակարգն անհնարին է իրականացնել առանց Կտրիճ Ներսիսյանի հեռացման», «Մենք պետք է այդ ճգնաժամը հանգուցալուծենք, բայց դա չի լինի, քանի դեռ Կտրիճ Ներսիսյանը հեռացված չէ»... «Իմ օրակարգը բացառապես հոգեւոր է եւ օրինական», «Ես հերքում եմ, որ մտածում եմ որեւէ տեղապահի մասին», «Եթե ես կարծիք արտահայտեմ որեւէ թեկնածուի վերաբերյալ, կնշանակի՝ խախտում եմ սկզբունքը, որ ես չեմ խառնվում այդ գործերին»: Ձեր կարծիքով քանի՞ մարդու խոսքերն եմ վերեւում մեջբերել: Ցանկացած ադեկվատ մարդ կմտածի, որ դրանց հեղինակներն առնվազն 2 տարբեր մարդ են, ընդ որում՝ միանգամայն հակառակ հայացքներ ունեցող: Մեկը Եկեղեցու գործերին է միջամտում, չի հարգում եկեղեցի-պետություն տարանջատումը, մյուսը հարգում է օրենքն ու Սահմանադրությունը, Եկեղեցին՝ որպես ինքնուրույն կառույց: Իրականում այս մտքերն արտասանել է նույն անձը՝ Նիկոլ Փաշինյանը, որի անձի երկվության հետ մենք առաջին անգամ չէ, որ բախվում ենք: Վերջին ճեպազրույցի ժամանակ արտաբերած այլ մտքեր էլ են խոսում անձի երկվության մասին: Հարց են տալիս՝ Դուք հայտարարեցիք, որ կաթողիկոսն այլ երկրի գործակալ է, բայց դրա հետ կապված ոչ մի վարույթ իրավապահները չեն հարուցել, դա կնշանակի՝ ցանկացած մեկը կարող է նման անպատասխանատու հայտարարություն անել, եւ դա որեւէ հետեւանք չի ունենա: Ինչ է պատասխանում պետության թիվ մեկ պաշտոնյան: Ասում է՝ ինչոր լրատվամիջոց թղթեր է հրապարակել, իրավապահները թող դրանք քննեն: Ասում է՝ կա նաեւ այլ պետության հետ հարաբերությունները չփչացնելու խնդիրը: Այս մարդը կարծում է, որ իր հայտարարությամբ հարաբերություններ չի փչացնում, միայն վարույթով դրանք կփչանան:



Նախօրեին Մայր Աթոռի դեմ գրոհից հետո շատերը կարծում են, թե ՔՊ-ում ոմանք փորձել են Ավարայրի ճակատամարտի դասերը կիրառել. ինչպես Սասանյան Պարսկաստանն էր հարբած փղերին ուղարկում մարտի դաշտ, ՔՊ-ն էլ որոշել է հարբած գրոհայիններին ուղարկել Մայր Աթոռ: Այն, որ Մայր Աթոռն ասպատակող իշխանական զանգվածը գրոհից առաջ ալկոհոլ էր օգտագործել, գուցե՝ խիզախության համար, որ չվախենան հավատավոր զանգվածի հետ առերեսվելուց, շատերն էին նկատել եւ զգացել՝ օդում տարածված բույրերից: Դա զգացվում էր նաեւ նրանց ագրեսիվ ու անադեկվատ պահվածքից: Ի դեպ, իշխանականները չնայած փորձում են ներկայացնել, թե կաթողիկոսի պաշտպանները քաղաքական ուժերն էին՝ իրենց թիմերով, սակայն անգամ անզեն աչքով նկատելի էր, որ շարքային քաղաքացիները մի քանի անգամ շատ էին, քան կուսակցական գործիչները:

ԹՈՒՆՅԱՆԻ ՈՒ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՉԵՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երբ հայտարարվեց, որ ՔՊ-ի պատգամավորության թեկնածուները պետք է 500 հազար դրամ վճարեն, իսկ ՔՊ-ի անդամ չհանդիսացողները՝ մեկուկես միլիոն, անկուսակցական պատգամավորները դիմեցին՝ ՔՊ-ին անդամակցելու: Չնայած մոտ մեկ ամիս է, որ Բաբկեն Թունյանն ու նախկին ԲՀԿ-ական Սերգեյ Բագրատյանը «Քաղպայմանագրին» անդամակցելու դիմումներ են ներկայացրել, սակայն նրանց դիմումը դեռեւս չեն քննել: Թե ինչու են Փաշինյանն ու ՔՊ վարչությունը ձգում գործող պատգամավորների՝ կուսակցության շարքերն անցնելու դիմումի քննությունը, պատգամավորները տեղեկություն չունեն: Նախօրեին Թունյանին հարցրինք՝ ո՞րն է իր դիմումը չքննելու պատճառը: Ասաց, որ տեղեկություն չունի, ավելին չմանրամասնեց: Սերգեյ Բագրատյանն էլ վստահեցրեց, որ որեւէ խնդիր չկա՝ նոյեմբերի վերջերին Գագիկ Մելքոնյանի հետ իրեն ու Թունյանին էլ էին կանչել վարչություն՝ իրենց դիմումները քննելու, սակայն իրենք՝ երկուսով, գործուղման էին. Հայաստանից բացակայում էին, այդ պատճառով էլ հետաձգվել է քննությունը:

ՍԱՀՄԱՆ

ԴԵԲԵԴԸ ԿՐՃԱՏՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԸ՝ ՀՕԳՈՒՏ ՎՐԱՍՏԱՆԻ

Հայաստանի անկախանալուց հետո սկսված հայ-վրացական սահմանի սահմանազատումը դեռ շատ տարիներ առաջ կիսատ է մնացել: Երկու երկրների միջեւ պետական սահմանագծերից մեկը համարվում է Դեբեդ գետը: Վրացիները խոշոր եւ մանր քարերով ամրացրել են Դեբեդի ձախ ափը, իսկ Հայաստանի իշխանությունն անգործության է մատնված եղել: Ձնհալքից եւ անձրեւներից վարարած Դեբեդը, հանդիպելով ամրացած վրացական ափին, մղվում է դեպի հայկական տարածք, քանդում, քշում-տանում տարածքները:



2010 թ. գարնանը Դեբեդը Նոյեմբերյանի Դեբեդավան գյուղից քշել-տարել է 2,8 հեկտար տարածք, որից 7 հազար քառակուսի մետրը այդ գյուղի բնակիչ Ալեքսեյ Մելիքսեթյանի դեղձի այգին էր: Դրանից մի քանի տարի առաջ հայ-վրացական հանդիպում է եղել, որի ժամանակ հայ գիտնականներից մեկը, ցույց տալով քարտեզը, ապացուցել է, որ Դեբեդի հունը փոխվելու հետեւանքով գետը մոտ 70 մետր խորացել է հայկական տարածքում, եւ նույն չափով էլ Հայաստանի տարածքը փոքրացել է: Դեբեդավան գյուղի վարչական ղեկավար Գեւորգ Սարգսյանի խոսքով՝ ամեն տարի գարնանը վարարած Դեբեդն ափամերձ հողերից, այգիներից կտորներ է պոկում-տանում: Ափի վտանգավոր հատվածում են գտնվում գյուղի 7 բնակիչներին պատկանող հողերը, այդ թվում՝ Գեւորգի հոր հողամասը, անցած տարիներին Դեբեդը նրա հոր հողամասից մի մեծ կտոր է քշել-տարել, այն կիսել է:

Գյուղի վարչական ղեկավարն ասաց, որ բնակիչներն այդ խնդրի վերաբերյալ դիմել են Տավուշի մարզային տարան եւ շրջակա միջավայրի նախարարություն: Խորհրդային ժամանակ Հայաստանի տարածքում՝ Դեբեդավանի ներքին մասում, հողից եւ քարերից պատնեշ կար, որը փակում էր վարարած գետի ընթացքը, տարիների ընթացքում այդ պատնեշը մաշվել է, դրա մի մասն է պահպանվել: Դեբեդի վարարումների, գետի հունը դեպի Հայաստան փոխվելու հետեւանքով պատնեշն ամբողջությամբ հայտնվել է եւ այժմ գտնվում է Վրաստանի տարածքում, վրացիները քարերով ամրացրել են այն:

2019 թ. Հայաստանի ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատար Վաղինակ Սարգսյանն այցելել է հայ-վրացական սահմանի այդ հատված, ծանոթացել Դեբեդի վարարումներից Հայաստանի տարածքի նվազելու խնդրին, որպեսզի հարցը ներկայացնի, քննարկվի կառավարությունում, գտնվեն լուծումներ, սակայն այդպես էլ քայլեր չեն արվել: 2024թ. մայիսի 27-ին, մի քանի օր տեղացած հորդ անձրեւներից հետո, երբ ջրհեղեղ եղավ, Դեբեդի վարարած հոսանքը Լոռու եւ Տավուշի մարզերում կամուրջներ, ափամերձ շատ կառույցներ քանդեց, հեղեղեց բնակելի տներ, ջրհեղեղի հետեւանքով զոհվեց 4 անձ, որից երկուսը Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ եւ Դեղձավան գյուղերի բնակիչներ էին: Թե 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղը Դեբեդի ափամերձ տարածքներից որքան տարածք քշեց-տարավ, հայտնի չէ:

Դեռ 2024 թ. նոյեմբերի 22-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում էի արել՝ Տավուշի մարզի տարածքում Դեբեդ գետի ափապաշտպան աշխատանքներ՝ պետական բյուջեի միջոցներով, ճիշտ են նախատեսված, 2024 թվականին նման աշխատանքներ նախատեսվածՙ են: Մարզպետարանից պատասխանել էին. «Տավուշի մարզի Դեբեդ գետի ափապաշտպան աշխատանքներ նախատեսված չեն, քանի որ միջպետական հանձնաժողովի կողմից սահմանազատման աշխատանքները չեն ավարտվել»:

2025 թ. մարտի 14-ին մարզպետին կրկին հարցում արեցի. «Տավուշի մարզի տարածքում, Վրաստանի հետ սահմանին 2025 թվականին սահմանազատման ու սահմանագծման աշխատանքներ իրականացվելո՞ւ են»: Մարզպետարանից պատասխանել են. «Տեղեկացնում եմ, որ սահմանազատման աշխատանքները եւ համալիր միջոցառումներն իրականացվում են բացառապես հանձնաժողովների, փորձագիտական խմբերի, ինչպես նաեւ՝ աշխատանքներում ներգրավվող փորձագետների եւ մասնագետների կողմից»:

Չորս ամիս անց՝ հուլիսի 31-ին, մարզպետ Ղալումյանին կրկին հարցում ուղարկեցի. «Դեբեդ գետի ափերի ամրացման, հեղեղապաշտպան կառույցների շինարարության համար 2025 թվականին որքա՞ն գումար է հատկացվել»: Մարզպետարանից պատասխանել են. «Դեբեդ գետի ափերի ամրացման, հեղեղապաշտպան կառույցների շինարարության համար դեռեւս գումար չի հատկացվել, կատարվում են նախագծահաշվարկային աշխատանքներ»: Մինչ նախագծահաշվարկային աշխատանքներ են կատարվում, առաջիկա գարնանը սարերում սկսված ձնհալից ու հորդ անձրեւներից վարարած Դեբեդն իր աջ ափից՝ Հայաստանի տարածքից, հերթական կտորն է պոկելու-տանելու, ավելի փոքրացնելով առանց այն էլ փոքրացած Հայաստանի տարածքը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱՐՈՆ ՉԱԽՈՅԱՆ, ՍՈՒՏ ԵՍ ԽՈՍՈՒՄ

ՔՊ-ականները կաշվից դուրս են գալիս՝ փրկելու Մայր Աթոռի դեմ հարձակման հերթական ձախողված փորձը, որն այս անգամ կազմակերպել էին՝ տիրադավ 10 եպիսկոպոսների թիկունքում թաքնվելով: Ընդդիմությանը «քլնգելու» պարտականություն ունեցող ՔՊ-ական «դաստան» հրահանգված գրառումներ էր անում: Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը գրեց. «Պատկերացնո՞ւմ եք այսպիսի բան Վազգեն Առաջինի կամ Գարեգին Առաջինի ժամանակ: Իհարկե, ոչ: Որովհետեւ Եկեղեցին Կտրիճի ժամանակ այնպիսի խայտառակության է հասել, որ ասում են՝ հեռացիր, ինչը նախադեպը չունի»: Իսկ նրա տեղակալ Տարոն Չախոյանը գրեց, թե մի ամբողջ ընդդիմություն ուժերի գերլարումով ընդամենը 2 հազար 200 մարդ էր հավաքել, իսկ իշխանությունն իբրեւ թե ո՛չ կոչեր է արել, ո՛չ էլ Մայր Աթոռ գնացել: «Կոչեր արել են 10 եպիսկոպոսները, հետեւաբար, մնացած համեմատություններն անհիմն են»,- գրել է նա՝ շրջանցելով հավաքին ներկա իրենց աջակիցների 1020 թիվը: Ի դեպ, թվերն էլ հրապարակել է իրենց քարոզիչ Դանիել Իոաննիսյանը, ինչը նշանակում է, որ կասկածելիորեն նվազեցվել է Եկեղեցու աջակիցների եւ ավելացվել՝ իշխանության աջակիցների թիվը:

Բայց թվերը չեն կարեւոր, այլ՝ այն, որ Տարոն Չախոյանը պարզապես սուտ է ասում, թե իշխանությունը կոչեր չի արել: Որովհետեւ իշխանության ներկայացուցիչները ոչ միայն կոչեր են արել, այլեւ Եկեղեցու դեմ գրոհի էին ելել սեփական դեմքերով: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ական որոշ համայնքապետեր ու մարզպետներ, ուղղակի «լեզուն դուրս գցած», մարդ են հավաքել՝ Մայր Աթոռ «գործուղելու» համար: Արագածոտնի, Արմավիրի, անգամ Գեղարքունիքի, Շիրակի համայնքային ու վարչական ղեկավարներին «գրոհի» օրը վաղ առավոտյան «համար մեկ» էր տրվել՝ մարդաորսություն անելու եւ ժամը 17:00-ին «ներկայանալի թվով» մարդ ուղարկելու համար: Եվ բոլոր մարզպետները, համայնքապետերը, բանուգործը թողել, լծվել էին վերադասին ծառայություն մատուցելու անպատվաբեր գործին, դրա համար կիրառելով բոլոր հնարավոր լծակները՝ շանտաժից ու սպառնալիքներից մինչեւ խնդրանք:

Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ հրահանգը ծանր է եղել հատկապես Վաղարշապատի «նորընտիր» համայնքապետի համար: Վիրավորանքներից ու լուտանքներից նոր-նոր ազատված՝ հիմա էլ մեղքի տակ մտնել են պարտադրում: Ըստ մեր աղբյուրի՝ Արգիշտի Մեխակյանն ամեն հնարավոր բան արել է՝ այդ մարդաորսությունը նեղ շրջանակում կազմակերպելու համար, որ շատ չխայտառակվի համայնքում, որտեղ իրեն, մեծ հաշվով, չեն ընդունում: Դա էր պատճառը, որ ՀԱԵ-ի դեմ արշավին նրա քրիստոնեադավ թիմը ներկայացել էր իր տեղակալի, խորհրդականի, օգնականի եւ այլ մանր-մունր չինովնիկների դեմքով, իսկ ինքը չկար:

Նախկին Խոյ համայնքի ղեկավար, այժմ՝ Վաղարշապատի համայնքապետի տեղակալ Լյուգվիդ Յայլոյանին դժվարությամբ է հաջողվել «սոլիդ» թվով մարդկանց ներգրավել հակահայ արշավին: Նրա նախկին պաշտոնը հարգել ու Էջմիածին են գնացել Դաշտ գյուղից ընդամենը մի քանի պնակալեզներ: Մարդկանց հավաքագրումները դժվար է ստացվել նաեւ Արմավիր եւ Մեծամոր համայնքներում: Մեր զրուցակիցը, որին եւս իր բարեկամ պաշտոնյան առաջարկել էր միանալ Եկեղեցու դեմ գրոհին, ասաց, որ հրաժարվել է: «Վախեցա: Ես Եկեղեցու դեմ դուրս չեմ գա: Ամեն օրս աղոթքով եմ սկսում, ապրում եմ Աստծո ողորմությամբ, երեխաներ ու թոռներ ունեմ, ինչ դուրս գամ Աստծո ու Եկեղեցու դեմ: Գրողի ծոցը գնան իրենք էլ, իրենց կեղծ բարեփոխումն էլ»,- ասաց նա:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Առաջիկայում նոր սերիաներ կտեսնենք՝ «Տուշոնկա» սյուժեից

Հինգշաբթի օրը մայր տաճարի տարածքում իրավիճակը լարված էր: Այնտեղ էին 10 դավաճան եպիսկոպոսները, ովքեր դեկտեմբերի 17-ին հանդես էին եկել հայտարարությամբ, դիմել ժողովրդին՝ դեկտեմբերի 18-ին, ժամը 17:00-ին հրավիրելով բոլորին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառին «հանգստի կոչելու» պահանջին միանալու: Այս հայտարարությունից հետո Հայ առաքելական եկեղեցու Արագածոտնի թեմը հայտարարեց, որ Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցում նախատեսված միասնական ժամերգությունը կտեղափոխվի՝ տեղի կունենա Մայր Աթոռում նույն օրը, ժամը 17:00-ին: Մայր Աթոռում հավաքվելու կոչեր արեցին որոշ ընդդիմադիր ուժեր, անհատներ: Արդյունքում՝ եկեղեցու բակում գերակշռում էին ոչ թե Փաշինյանի աջակիցները, այլ՝ Հայ առաքելական եկեղեցու հետեւորդները: Ինչո՞ւ Նիկոլ Փաշինյանը գնաց այս քայլին, ի՞նչ տվեց այս ամենը նրան:

Աժ նախկին պատգամավոր **Նաիրա Զոհրաբյանը** մեզ հետ զրույցում ասաց. «Արմինե Օհանյանը երեկ մի ֆանտաստիկ նյութ էր գրել: Նման նյութ կարող է գրել միայն մեկը, ով լավ ճանաչում է Նիկոլին: Գրել էր, որ նա այժմ հանգիստ՝ կոնյակի բաժակը ձեռքին, համակարգչի առջեւ նստած նայում է, թե ինչ է կատարվում Էջմիածնում, եւ հոգին փառավորվում է այդ տեսարանից: Շատերը գրում են, որ իշխանականները պարտվեցին, անիմաստ տեղը գնացին մայր տաճար եւ այլն, բայց այդ մարդը բացարձակ այլ խնդիր է լուծում: Ես եւս Նիկոլին լավ եմ ճանաչում ու վստահաբար ասում եմ, որ նրա խնդիրը ո՛չ հաղթանակելն էր, ո՛չ էլ պարտվելը: Նա խնդիր չէր դրել հաղթելու կամ սադրելու: Նրա խնդիրն այլ էր, եւ նա կոնկրետ լուծեց: 10 տիրադավներ հորդորով դիմեցին Վեհափառին, որպեսզի նա հեռանա: Այս ամենի նպատակն այն է, որ նրա առաջիկա քայլերը հենված լինեն հենց այս ամենի վրա՝ որ մենք փորձեցինք, չստացվեց, իսկ, այ, հոգեւորականները դա անում են, եւ ես աջակցում եմ նրանց: Նա հերոսացնում է այդ եպիսկոպոսներին, որ նրանք, անգամ թուքումուր ուտելով, որդիական հորդոր հղեցին Վեհափառին, սակայն նա չլսեց իրենց: Չեմ բացառում, որ առաջիկայում մենք Հ1-ի եթերից նոր դաժան սերիաներ տեսնենք՝ «Տուշոնկա» սյուժեից: Օրինակ՝ Արշակ սրբազանի՝ գրպանը պլան գցելու մասին կամ՝ Վեհափառի կողմից իբրեւ կատարված քրեական հանցագործությունների՝ փողերի լվացման, ռուսի շպիոն լինելու մասին եւ այլն, որոնք հիմք կնախապատրաստեն Վեհափառին եւս կալանքի տանելու համար: Տեղի ունեցածը կրկես էր: Նիկոլը լավ գիտեր, թե այն ինչ ավարտ է ունենալու, բայց բազմասերիանոց ֆիլմի մեկ արարն իրեն պետք էր՝ հետագա քայլերը ծրագրելու համար, որ եթե որդիաբար հորդորը չես ընդունում, կգնաս քրեական հոդվածներով»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆՈՒՄ՝ «ՄԵՐ ՁԵՎՈՎ» ՇԱՐԺՈՒՄԸ, ՁԱԽ ԿՈՂՄՈՒՄ՝ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՈՒՐՋ ՀԱՎԱՔՎԱԾ ՈՒԺԵՐԸ

- Տասը եպիսկոպոսների՝ Մայր Աթոռի դիմաց իրականացրած ակցիան, ըստ Ձեզ, ի՞նչ նպատակ էր հետապնդում, եւ արդյո՞ք հաջողեցին, իշխանությունը վստահեցնում է, թե ակցիան իրենք չէին կազմակերպել, իրենք կապ չունեն, եթե ունենային, մի քանի անգամ շատ մարդ կհավաքվեր:

- Կասկած չկա, որ այդ հավաքը կազմակերպել էր իշխանությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, բայց՝ նենգաբար, որպեսզի հաղթանակի դափնիները վերագրեր իրեն, պարտության խայտառակությունից էլ խուսափեր: Բայց ակնհայտ էր, որ հավաքը կազմակերպել էր իշխանությունը, եւ Նիկոլ Փաշինյանը վերջնական պարտվեց. ցանկացած այլ լուծում այլեւս նշանակություն չունի, ինքն ամիսներ՝ որքան պայքարել է, հիմա այդ պայքարն ավարտվեց պարտությամբ:

- Ո՞րն էր իրենց պլանը, որ ասում եք՝ չհաջողեցին:

- Մոռացել եք, որ Վաղարշապատի ընտրություններից հետո Փաշինյանը հայտարարեց, թե ընտրությունների արդյունքները նոր լիցք հաղորդեցին Եկեղեցու դեմ պայքարում, հիմա այդ նոր լիցքը, էն հոգեւոր հավաքի մասին հայտարարությունը եւ այլն, բերեցին այս ակցիային: Իհարկե, ինքը պիտի ասի՝ ես ի՞նչ գործ ունեմ, հոգեւորականներն իրենք իրենց հարցերն են լուծում, բայց այդպես կլիներ, եթե տասը տիրադավները, առանց ժողովրդին կոչ անելու, որ եկեք գնանք Մայր Աթոռ, հորդորենք Վեհափառին, գնային սուսուփուս իրենց՝ կաթողիկոսի հրաժարականի հորդորի նամակը ներկայացնեին քարտուղարությանը, այս դեպքում արտառոց ոչինչ չէր լինի, բայց իրենք կոչ արեցին ժողովրդին, որ իրենք գան, ու նույն դեմքերն ու դեպքերն էին, որոնք հանդիպում էին բոլոր կեղծ պատարագներում: Ի դեպ, ի պատիվ ոստիկանության, իրենք բարձր մակարդակի վրա գտնվեցին՝ մանրմունր բաները չհաշված, բախումներ թույլ չտվեցին, բայց հավաքի նպատակը ճնշումն էր, դուք երեւի չեք պատկերացնում՝ ինչ է նշանակում ճնշում: Երբ որ մեծ բազմություն հավաքվեր, կլիներ ճնշում, եւ գուցե լիներ վերջին կաթիլը, որ Վեհափառը հանձնվեր, հրաժարական տար:

- Ուզում եք ասել, որ իշխանությունը կհրաժարվի՞ Եկեղեցու դեմ պայքարից:

- Ամեն ինչ էլ հնարավոր է լինի, բայց, կրկնում եմ՝ դա նշանակություն չունի, որովհետեւ հայ ժողովուրդը, մի մասը՝ լռելյայն, մի մասը՝ Մայր Աթոռի դիմաց, հասկացրեց, որ մենք չենք գնում սրբապիղծների կոչով «լավ գործ» անելու համար, եւ դա շատ գեղեցիկ էր: Իհարկե, հնարավոր է ընդհուպ ձերբակալեն կաթողիկոսին, բայց դա ոչինչ չի փոխելու: Գարեգին Վեհափառն իր բարձունքի վրա գտնվեց, նույնիսկ էդ տասը սրբապիղծների հետ հարաբերություններում ինքը գտնվեց իր բարձունքում, որովհետեւ այն, ինչ Փաշինյանը սպասում էր Վեհափառից, տեղի չունեցավ, իսկ Փաշինյանը սպասում էր, որ Գարեգին Վեհափառն իմպուլսիվ արձագանք կտա իրողություններին ու տասը սողուններին կարգալույծ կանի, բայց դա տեղի չունեցավ շնորհիվ Գարեգին վեհափառի խորիմաստ, հավասարակշռված գործունեության, ինչն էլ առիթ չտվեց այդ սողուններին՝ կեցվածք ընդունել՝ դե որ այդպես է, մենք էլ սենց ենք անում: Հիմա կամ պետք է կալանավորի Վեհափառին, կամ տասին վերցնի, մի եկեղեցի ստեղծի, որը կլինի ծիծաղելի: Ես ամիսներ առաջ եմ ասել, որ իր նպատակը ոչ թե Եկեղեցին մաքրելն է, այլ Եկեղեցին պառակտելը, սարքել հայաստանյան առաքելական եկեղեցի, որը կլինի իր ցնորական գաղափարի՝ չորրորդ հանրապետության մասը:

- Պարոն Աղազարյան, նաեւ Ձեր վերջին աղմկահարույց հայտարարության մասին հարցնեմ՝ ասել էիք, որ Նիկոլ Փաշինյանը, իշխող քաղաքական ուժը եւ ընդդիմության մի մեծ հատված՝ Դաշնակցության գլխավորությամբ, գնում են հայոց պետականության վերացմանը, որովհետեւ Դաշնակցությունն ասում է, որ Արցախի հարցը չի փակվել: Ի՞նչ եք առաջարկում Դուք՝ փակե՞լ Արցախի հարցը:

- Ես այդ հայտարարությունն արել եմ Իշխան Սաղաթելյանի՝ «Արցախի էջը փակված չէ» հայտարարության առիթով, ես, այո, կարծում եմ, որ սա շատ վտանգավոր հայտարարություն է, եւ բոլոր այն քաղաքական ուժերը, անհատները, որ նման հայտարարություն են անում, ջուր են լցնում Նիկոլ Փաշինյանի ջրաղացին, այսինքն՝ նպաստում են Հայաստանի կործանմանը, որովհետեւ Փաշինյանի վերարտադրությունը կործանարար է լինելու մեր երկրի համար:

- Ուզում եք Նիկոլ Փաշինյանի նման այդ էջը փակեն ու մոռանա՞ն:

- Կակռազ, ինքը չի փակել՝ այդ հարցը բերեց օրակարգ Բեռլինում, երբ հայտարարեց, որ դիմում է Ալիեւին, որ այդ հարցը եւ Ադրբեջանից փախստականների վերադարձը Հայաստան հասցնեն զրոյի: Դա սխալ է. Արցախի հարցով պետք է զբաղվեն ՀԿ-ները, արցախցիները, ինչպես նաեւ՝ Եկեղեցին, որի դեմ Նիկոլը տանում է անհաշտ պայքար: Պետական այրերը, քաղաքական ուժերը, որ ակնկալում են մաս կազմել իշխանությանը, իրենց կողմից այդ հայտարարությունը վտանգավոր է, ինչը բերելու է Փաշինյանի վերարտադրությանը՝ իր բոլոր բացասական հետեւանքներով, որովհետեւ Նիկոլը շատ սահուն մանիպուլացնում է այդ հարցը՝ Ղարաբաղն էլ, ղարաբաղցիներն էլ, որ ժողովրդի մեջ սերմանվեց մեր՝ բոլորիս կողմից վարվող այլանդակ քաղաքականության շնորհիվ, եւ այդ օգտագործելով, ինքն իբրեւ թե խուսափում է պատերազմից, եւ, հետեւաբար, իրեն են ընտրելու:

- Ձեր նախկին կուսակից ընկերները՝ ՀՅԴ-ականները, չե՞ն նեղացել Ձեզնից:

- Թեթեւակի զրույց եղել է որոշ ընկերների հետ, եւ պարզաբանումներ եմ տվել, թե ինչ նպատակով եմ ասել, ու ներկայացրել եմ Նիկոլին իշխանությունից հեռացնելու իմ եւ Ասլանյան Հակոբի ծրագիրը, այն է՝ միասնական ճակատով գնալ ընտրության, որի կենտրոնում լինելու է Սամվել Կարապետյանի «Մեր ձեւով» շարժումը, ձախ կողմում՝ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի շուրջ հավաքված ուժերը, իսկ աջ կողմում՝ նրանք, որոնք անտագոնիստական հակասություններ ունեն ձախերի հետ, այդ թվում՝ մենք: Բայց քանի որ բոլորի նպատակն էր Նիկոլին հեռացնելը, Սամվել Կարապետյանի գլխավորությամբ գնում ենք այդ նպատակին: Աջ մասում, օրինակ, կարող են լինել Լեւոն Տեր-Պետրոսյան, Գագիկ Ծառուկյան, Դոկ եւ այլն: Ճակատը հանդես է գալիս հայտարարությամբ, որ ինքը Հայաստանի իշխանության ստորագրած բոլոր փաստաթղթերին տեր է, երկրորդ՝ իշխանության է գալիս մեկ տարի ժամկետով, այդ մեկ տարվա ընթացքում Ալիեւին, Էրդողանին, էն ԵՄ-ի հիմար Կալլասին, ապուշ Մակրոնին, տուֆտա Մերցին ասում է, որ, սիրելիներս, մեկ տարի մեզ չանհանգստացնեք, մենք կայուն վիճակ ենք ստեղծում, բոլոր փաստաթղթերին տեր ենք՝ խաղաղության պայմանագիր եւ այլն, մեկ տարի հետո այս քաղաքական ուժերն իրենց ծրագրերով կներկայանան ժողովրդին, եւ այդ ժամանակ կձեւավորվի ռեալ քաղաքական պատկերը, ընդ որում՝ ստորագրվում են կետեր, թե ճակատում գտնվող ուժերը միմյանց հետ ինչ փոխկապակցվածության մեջ են գտնվում: Եվ քանի որ Փաշինյանն իքս պահին այս կամ այն ուժին, որն իրեն վտանգ է ներկայացնելու, տվյալ դեպքում՝ Սամվել Կարապետյանի «Մեր ձեւով» շարժմանը դուրս է հանելու մրցապայքարից, վերջինի համակիրներն իրենց ձայնը պետք է տան այդ ճակատին՝ իմանալով, որ Կարապետյանի ուժը մաս է կազմելու կառավարությանը՝ իր կշռին համաձայն:



Մեր զրուցակիցն է ՔՊ-ական նախկին պատգամավոր, ՄԱՍ կուսակցության ղեկավար ***Հովիկ Աղազարյանը****:*



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆՈՐԻՑ ՀԻՇԵԼ ԵՆ ԳՐԱՆՏԱԿԵՐՆԵՐԻ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ԳՈՐԾԸ

Գլխավոր դատախազությունը դատարան է ուղարկել մասշտաբային հափշտակության վերաբերյալ մի գործ, որը 10 տարվա վաղեմություն ունի, քննվել ու «դատաքննվել» է 2016-2017 թվականներից սկսած եւ դատական հեռանկար չունի: Հանցագործը ոմն Հ. Գ.-ն է, որը, ըստ քննիչների, 2009-2014 թվականների ընթացքում Եվրոպական Միությունից 972 միլիոն դրամ է հափշտակել: Այդ ընթացքում Հ. Գ.-ն զբաղեցրել է ֆինանսների նախարարության՝ Եվրոպական Միության հետ աշխատանքների համակարգման բաժնի ղեկավարի պաշտոնը: Նրա գործունեությունը հիմնականում միջազգային ասպարեզում է եղել: Մեր տեղեկություններով, խոսքը «Հայաստանի բրոքերների ասոցիացիա» ՀԿ նախագահ Հրայր Գյոնջյանի մասին է: Ըստ դատախազության, նա 972 մլն դրամը հափշտակել է՝ հաղթող ճանաչվելով «ԵՄ պատվիրակության կողմից հայտարարված մրցույթներում տարբեր հասարակական կազմակերպությունների միջոցով կեղծ դրամաշնորհային ծրագրեր ներկայացնելով»: Նրան օգնել են ԵՄ հայաստանյան գրասենյակի աշխատակից Մոնիկա Պապյանը, ԵԱՀԿ գրասենյակների աշխատակիցները, այլ անձինք:

Բացահայտումը նոր չէ: Այս վարույթով դատախազությունն ընդամենը հաստատել է դեռեւս 2016 թվականին Գյոնջյանին առաջադրված մեղադրանքը: Քանի որ Գյոնջյանը դեռ այն թվերից հետախուզման մեջ է, դատարանին միջնորդել են նրա նկատմամբ հեռակա դատաքննություն իրականացնել: Հիշեցնենք. սա հայտնի գրանտակերների գործն է, որի շուրջ ժամանակին մեծ աղմուկ էր բարձրացել: Իրավապահ մարմիններին դիմել էր հենց գրանտատուն՝ Եվրոպական Միության գրասենյակը, որը ստուգումներ էր իրականացրել եւ հայտնաբերել, որ հատկացված դրամաշնորհը նպատակային չի օգտագործվել, եւ խոշոր գումար է յուրացվել: Այն ժամանակ, բացի Գյոնջյանից եւ Չիլինգարյանից, այլ մեղադրյալներ էլ կային: Մի խումբ անձանց կողմից փաստաթղթերի կեղծիք կատարելու համար մեղադրանք էր առաջադրվել 8 անձի՝ Տիգրան Սուքիասյանին, Գեւորգ Ղազարյանին, Ռուբինա Տեր-Մարտիրոսյանին, Արմեն Բարեղամյանին, Անահիտ Ավագյանին, Սերգեյ Բալասանյանին, Դինա Մանուկյանին, Կարեն Ստեփանյանին:

Հրայր Գյոնջյանը եւ Գարիկ Չիլինգարյանը, որը, ըստ «Հրապարակի» տեղեկությունների, առանցքային դեր է ունեցել այս գործում, լինելով հետախուզման մեջ, խուսափել էին քննությունից: Նրանք, ովքեր չէին խուսափել, ի վերջո շահեցին, քանի որ նրանց նկատմամբ քրեական հետապնդումը երկար քննությունից ու վերաքննություններից հետո ի վերջո կարճվեց՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Գլխավոր մեղադրյալը հայաստանյան գրասենյակի ծրագրերի կոորդինատոր Մոնիկա (Մարինե) Պապյանն էր, որը մեծ համարում է ունեցել ԵՄ ղեկավարության մոտ եւ երկար ժամանակ որեւէ կասկած չի հարուցել, մեղադրվել էր խոշոր չափերով հափշտակության համար: Նա երկար ժամանակ չէր ընդունում մեղադրանքը, մի քանի փաստաբան է փոխել: Ի վերջո, դատարանը բավարարել է բոլոր մեղադրյալների պաշտպանների միջնորդությունները՝ կարճել մեղադրանքները վաղեմության հիմքով: ԵՄ գրասենյակի կրած վնասն այդպես էլ չի փոխհատուցվել: Հափշտակությունները կատարվել են հիմնականում գյուղատնտեսությանն աջակցելու համար հատկացված դրամաշնորհներից:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ «ԷՔՍՊԱՆՍԻԱՅԻ» ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՅԻՆ ԼՔԵԼՈՒ Է ԻՐ ԳՅՈՒՂԸ

*«Հրապարակի» զրուցակիցը տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թաթուլ Մանասերյանն** է:*

- Հայաստանն Ադրբեջանից նավթամթերք է գնել, որի առաջին խմբաքանակը Վրաստանի երկաթուղային ճանապարհով մտավ երկիր: Փաշինյանը ողջունել է դա՝ նշելով, որ առեւտրի կարեւոր նախապայմանը խաղաղության հաստատումն է: Որոշ իշխանավորներ եւս ցնծում են՝ պատերազմական ռեժիմը փոխարկվում է տնտեսական գործակցության ռեժիմի: Ո՞րն է Ձեր գնահատականը:

- Խաղաղությունն ինքը հետեւանք է անվտանգության. այն ժամանակ, երբ կհաստատվի անվտանգություն, իսկ դա, ինչպես ցույց է տալիս մարդկության պատմությունը, սովորաբար հեշտ ձեռք չի բերվում, այդժամ մենք կարող ենք առաջին քայլերն անել, ընդ որում՝ ոչ թե միանգամից քիրվայության, «գրկախառնվելու» եւ առեւտուր անելու, այլ առաջին գլխավոր պայմանը պետք է լինի մեկը մյուսի ռազմարդյունաբերական համալիրների (ՌԱՀ) մասին տեղեկատվության փոխանակումը, իրազեկվածությունն ու վերահսկողությունը: Այն իր հերթին կբերի ռազմական ծախսերի կրճատման, եւ դա կուղղվի համատեղ այլ՝ խաղաղ նպատակներով ծրագրերի իրագործմանը: Կարծում եմ, ինչպես շատ հարցերում, այս դեպքում հաղորդակցությունները: Երկրորդը. Թուրքիան պետք է իր կողմից բացի Մարգարայի անցակետը, որպեսզի ոչ միայն ազատ, այլեւ արդար առեւտուր լինի: Գյումրի-Կարս հատվածը նույնպես վերաբացման կարիք ունի: Եվ ընդհանրապես, եթե խոսում ենք TRIPP ճանապարհի մասին, ապա դա միակողմանի երթեւեկություն է այս պահի դրությամբ, թեկուզ գաղափարի տեսքով, քանի դեռ Հայաստանը դեպի ծով ելք չունի:

- Պարզ է, որ գնելով Ադրբեջանի SOCAR պետական նավթային ընկերության արտադրած նավթամթերքը՝ Հայաստանն ուղղակի կամ անուղղակի կերպով ֆինանսավորում է այդ երկրի բանակը. արդյո՞ք սա հերթական դավաճանական քայլը չէ:

- Պատասխանն արդեն առկա է Ձեր հարցի մեջ. Ադրբեջանը նախեւառաջ փորձում է իրագործել Թուրքիայի ավելի մեծապետական ծրագրերը, եւ դրա մեջ պարզունակություն նկատելը հիմարություն է, կամ վստահել եւ մտածել, որ դա միայն բարի կամքի դրսեւորում է ու կարող է շարունակական լինել: Դրա երաշխիքները բացարձակ չեն ուրվագծվում, հակառակ դեպքում Ադրբեջանի ղեկավարության հռետորաբանությունը պետք է գոնե մի քիչ այլ լիներ: Չեմ բացառում այն սցենարը, որը հատուկ է եւ թուրքերին, եւ ադրբեջանցիներին. նավթ մատակարարելով՝ աստիճանաբար «դիվերսիֆիկացիա» տեղի կունենա, եւ ՌԴ-ից՝ մեր երկրի ստացվող նավթամթերքի «առյուծի բաժնի»՝ 80 տոկոսի փոխարեն, այդ տեղը կզբաղեցնի Ադրբեջանը, ինչը նշանակում է, որ ցանկացած պահի, եթե ՀՀ իշխանությունները չբավարարեն Ադրբեջանի հարաճուն պահանջները, ապա, մեծ հավանականությամբ, այդ ամենը կդադարեցվի: Այդ դեպքում շրջափակման մեջ հայտնված Հայաստանը դժվար կարողանա իր վաղեմի դաշնակցից նույն պայմաններով, նույն բարյացակամությամբ ակնկալել գոնե նավթամթերք, չեմ խոսում արդեն մյուս ապրանքների, ծառայությունների եւ հարաբերությունների մասին, որոնք լուրջ վնաս կկրեն:

- Ժամանակին նույնպիսի ընդվզում կար թուրքական ապրանքների գնման եւ Թուրքիա հանգստի մեկնելու հետ կապված: Տեսակետ կա նաեւ, որ մեր գործարարների առեւտրային հաջողությունները թուրքական շուկայում հեռանկարային չեն:

- Իհարկե, այսօրվա իշխանությունները չեն կողմնորոշվում. իշխանության գալով՝ լայնածավալ ներմուծումներ են կատարում Թուրքիայից, անցավ որոշ ժամանակ՝ էմբարգո կիրառվեց թուրքական ապրանքների դեմ, որի հեղինակներից եւ նախաձեռնողներից մեկը ես եմ եղել երկար տարիներ: Դրան հաջորդեց դարձյալ ազատականացումը, այսինքն՝ ապրանքների մեծաքանակ ներմուծում, վերաարտահանում եւ այլն, եւ այս պարագայում, կարծում եմ, կարող է նույնը տեղի ունենալ: Ադրբեջանի հետ առեւտուրը հնարավոր է քիչ թե շատ հավասարակշռված լինի, որովհետեւ կան ապրանքներ, ծառայություններ, որոնք կարող են ուղղակի որպես երկրների մրցակցային առավելություններ հաշվի առնվեն փոխադարձ առեւտրի համար եւ տարածաշրջանային առեւտրում: Բայց Թուրքիայի մասով իրավունք չունենք անգամ միամտաբար մտածել, թե կունենանք ազատ եւ արդար առեւտուր: ԵՄ բոլոր երկրները, աշխարհի երկրների մեծ մասը թուրքական ապրանքներով է ողողված եւ դրանց «էքսպանսիային» չեն կարող դիմակայել ոչ հզոր տնտեսությամբ Գերմանիան, ոչ Ֆրանսիան, ոչ Շվեյցարիան եւ այլն: Ինչպե՞ս փոքր ու խոցելի տնտեսություն ունեցող Հայաստանը կարող է հավակնել Թուրքիայի հետ ազատ մրցակցության, հատկապես որ մեր տնտեսության մրցունակությունը բավականին ցածր է: Ընդամենը երեւի մեկ տասնյակի չհասնող ապրանքներ, ապրանքատեսակներ, որոնք ավելի շատ կարող են սպառվել կամ տեղական շուկայում, կամ, լավագույն դեպքում, Ռուսաստանում եւ Եվրասիական շուկայում, որոնք ճանաչելի են դարձրել մեր ապրանքները: Իսկ թուրքական ապրանքների պարագայում, անկասկած, մասշտաբի էֆեկտը մեծ վնաս կտա Հայաստանին, իսկ հայ գյուղացին արդյունքում թողնելու է իր հողը, հայ գյուղն է լքվելու, որովհետեւ անհնար է դիմակայել թուրքական ապրանքների «էքսպանսիային»:

- Նշելով, որ վրացական երկաթուղու սակագնի հետ կապված կան որոշակի հարցեր՝ Փաշինյանը, ըստ էության, «սպառնացել» է Թբիլիսիին՝ «եթե դրանք չկարգավորվեն, այլընտրանքային ձեւեր կփնտրեն ներմուծումն ու արտահանումը կազմակերպելու համար»: Ի դեպ, Բաքվում էլ են բողոքում վրացական բարձր սակագներից: Փաշինյանը մեր երկրի շահն է առաջ տանում, թե՞ կրկին «թելում» է Ադրբեջանի «ասեղը»:

- Փաշինյանը փորձում է հերթական անգամ միջնորդի անշնորհակալ դերը ստանձնել: Կարծում եմ՝ Վրաստանն ու Իրանն առեւտրատնտեսական առումով միակ՝ մեզ համար շահերի համընկնման տեսակետից, բարեկամ երկրներն են եւ ադեկվատ՝ բանակցելու, համագործակցելու համար, նաեւ՝ կանխատեսելի: Եթե հիմա «նետերն» ուղղենք Վրաստանի ուղղությամբ, բացարձակ լավ բան սպասել չի կարելի: Դա նույնն է, որ ՌԴ-ի հետ հարաբերություններ են փորձում փչացնել: Ի վերջո, կա մի կարեւոր հանգամանք. Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելով՝ կա ոչ խտրական վերաբերմունքի սկզբունքը, որով առաջնորդվում են բոլոր երկրները: Առաջին հերթին Թուրքիան պետք է դա անի: Նաեւ, ինչու չէ՝ Վրաստանը, որը տարանցման համար գումարներ չգանձի ՀՀ-ից, եթե ելք են տրամադրում դեպի ծով: Իսկ դա արվում է, եւ ցանկալի է, որ Հայաստանն իր խնդիրներով մտահոգված լինի: Միջնորդի դերը կարող են ստանձնել Վրաստանին, ՌԴ-ին, Թուրքիային եւ Ադրբեջանին մոտ կանգնած շրջանակները:

ԷՆ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՐՏԵՐՆԵՐԸ ԳՆՈՒՄ՝ ՆԻԿՈԼԻ ԱՋՆ ԵՆ ՊԱՇՈՒՄ



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Այր Աթոռում տեղի ունեցած դեպքերը շատերին են հուզել, 10 եպիսկոպոսների հայտարարությունը, գրոհն Էջմիածնի վրա եւ Վեհափառի հեռացման պահանջը թիվ մեկ քննարկման թեման են երկրում: Բռնցքամարտի աշխարհի չեմպիոն **Իսրայել Հակոբկոխյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով եկեղեցու դեմ հերթական գրոհին, ասում է.

- Բոլորը կարծիք հայտնող են, արդեն հոգնել եմ կարծիք լսելուց, գործ անել է պետք, ազգը պետք է զարթնի, էլ ուրիշ տարբերակ չի մնացել:

- Բայց ազգը արթուն է: Ամռանը Մայր Աթոռի բակը լեփլեցուն էր, սակայն պայքարելու եւ դիմադրություն ցույց տալու փոխարեն կաթողիկոսը գնաց հաշտության ճանապարհով՝ Աջապահյանին հոժարակամ բանտ ուղարկեցին, ապա այս իշխանությունը բանտարկեց Վեհափառի քրոջ որդուն, եղբորը, եղբորորդուն, Արշակ սրբազանին, եւ հիմա հերթը կամաց իրեն է հասնում:

- Գործողություն չեղավ, հիմա խոսում ու խոսում են, ինչ: Հայ ազգին պետք է արթնացնել, արթնացնող չկա:

- Բայց արթնացնողներին բանտարկում են. Սամվել Կարապետյան, Բագրատ սրբազան...

- Դե որ Սամվելի նման 10-20 հազար տղա լիներ, հո Սամվելին չէ՞ին կարա բանտ գցեին: Ես սովորական ռամիկ տղա եմ, գլուխս լավ չի աշխատում, ուզում եմ ջոկեմ՝ Հայաստանում հա՞յն ա ավելի շատ, թե՞ թուրքը: Հասել ենք էն օրվան, որ անբարոյական տերտերները էթում Նիկոլի աջը պաչում են: Էդքանից հետո էլ ի՞նչ ասես: Հիմար վիճակում ենք հայտնվել:

- Այսինքն՝ Դուք ամեն ինչ ժողովրդի հետ եք կապում:

- Նիկոլն էլ ա ժողովրդի անունից խոսում, էն անբարոյականներն էլ են ժողովրդի անունից խոսում, բարոյականներն էլ են ժողովրդի անունից խոսում, դրա համար ես էդ «ժողովուրդ» բառն էլ եմ սկսել չընդունել:

- Գործողություն եք ակնկալում, իսկ Դուք՝ ինքներդ, ի՞նչ եք անում: Օրինակ՝ ինչո՞ւ Մայր Աթոռ չեք գնում եւ Եկեղեցուն աջակցություն չեք հայտնում:

- Ես Մայր Աթոռին էլ եմ աջակցում, ինչքան հայ կա, բոլորին աջակցում եմ: Մտքիցս մենակ քֆուր ա գալիս: Ուրիշ ոչ մի բան, էլ խոսալու բան չունեմ: Հիմար վիճակում ենք հայտնվել, չեմ կարողանում կողմնորոշվեմ, թե քանի հայ ա մնացել մեր երկրում: Եթե բոլորին բանտ ա լցնում, ուրեմն պիտի բանտից սկսենք: Ես էլ՝ հայերիս ծառան:

Մաշտոցի հիմնած եկեղեցին՝ ադրբեջանական զինապահեստ

Հայաստանում նշվում է Սուրբ Սարգիս Զորավարի, նրա որդի Մարտիրոսի եւ 40 զինվորների հիշատակի օրը: Պարսկաստանից Հայաստան բերելով նահատակ Սուրբ Սարգսի մասունքները՝ Մեսրոպ Մաշտոցը դրանք ամփոփել է երկու տեղ, հիմնելով համանուն եկեղեցիներ: Դրանցից մեկն Ուշիի Սուրբ Սարգիսն է, մյուսը՝ Գագա Սուրբ Սարգիսը, որը կառուցվել է Գագ լեռան գագաթին, Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կանգարք գավառում: Գագա Սուրբ Սարգիս եկեղեցին խորհրդային շրջանից հայտնվել է Ադրբեջանի տարածքում, այն գտնվում է Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղի խրամատներից 1,5-2 կիլոմետր հեռավորությամբ, Ադրբեջանի Ղազախի շրջանի Դաշ Սալահլի գյուղից 4 կմ հեռավորությամբ: 1920 թվականին խորհրդային իշխանությունն այդտեղ սահմանագծումն այնպես է արել, որ սահմանագիծն անցնում է սարի լանջով, Գագ լեռան գագաթն Ադրբեջանին է անցել: Առանց խաչի, վնասված, սակայն կանգուն եկեղեցու մյուս կողմն անդունդ է, խոր ձոր: Եկեղեցու կողքին կան հայկական գերեզմաններ եւ քարանձավներ: Խորհրդային տարիներին Կոթի գյուղի բնակիչներն ուխտագնացություններ, այցեր են կատարել Գագա Սուրբ Սարգիս եկեղեցի: Կոթի գյուղից Գագա Սուրբ Սարգիս եկեղեցին անզեն աչքով տեսանելի է: Սահմանը պաշտպանող զինծառայողները հայտնում են, որ ադրբեջանական զինուժը եկեղեցին դարձրել է զինապահեստ, դրա կողքին սարքել է ամրացված հենակետ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԿԻՐՆ ԻՋԵՑՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ

ՄԻՍԿ

Գիտեք, թե կառավարության նիստի ժամանակ ինչի մասին է մեկ ժամից ավելի խոսում Փաշինյանը, ահա մի քանի օրինակ. Մեծամոր քաղաքի Միքայելյան, Թումանյան, Տերյան եւ Կոմիտասի փողոցների ջրագծերի փոխարինում, կատարված է աշխատանքների 45 տոկոսը, կառուցվել է 3,5 կիլոմետր ջրագիծ, շահառուները՝ հազար տնային տնտեսություն, Շենավան համայնքի մանկապարտեզի կառուցում եւ հարակից տարածքների բարեկարգում, Բերքաշատ համայնքում գազատարի կառուցում, Արաքս համայնքի Արաքս բնակավայրի Ռաֆֆու փողոցի 200 մետր ճանապարհի ասֆալտապատում, որն ավարտվել է, Արաքս համայնքի Առատաշեն բնակավայրի կենտրոնական ճանապարհի մայթեզրի սալարկում, որն ավարտվել է, Արաքս համայնքի Առատաշեն բնակավայրի՝ գերեզմանոց տանող ճանապարհի ասֆալտապատում: Եվ այսպես շարունակ՝ ամբողջ կառավարության նիստի ընթացքում, մեկ ժամից ավելի: Կարո՞ղ եք պատկերացնել ուրիշ որեւէ երկրի ղեկավարի, վարչապետի, որը կառավարության նիստ է անում, հավաքում է կառավարության անդամ նախարարներին, մարզպետներին, երկրի մյուս բարձրաստիճան պաշտոնյաներին եւ մեկ ժամից ավելի կարդում է ինչոր ցուցակ, թե որտեղ քանի մետր ջրագիծ է փոխվել, գազատար կառուցվել կամ մայթեզր սալարկվել: Դժվար է պատկերացնել, որովհետեւ աշխարհում չի կարող նման երկիր լինել, նման պարապ զանգված, որ մարդիկ չասեն՝ բայց դրանք ժէկի պետին կամ առնվազն համայնքապետին վերաբերող հարցեր են, ոչ թե կառավարությանը եւ վարչապետին:

Հայաստանի Սահմանադրության 152-րդ հոդվածը վերաբերում է վարչապետի եւ կառավարության մյուս անդամների իրավասություններին, եւ այդ հոդվածում վարչապետի մասով ասվում է. «Վարչապետը կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է կառավարության գործունեությունը եւ համակարգում է կառավարության անդամների աշխատանքը: Վարչապետը կարող է կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման եւ գործունեության կարգը սահմանվում է օրենքով»: Տեսեք՝ հիմնական օրենքն ասում է. կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է կառավարության գործունեության հիմնական ուղղությունները, ոչ թե մեկ ժամից ավելի կարդում է իրեն տրված մի տեքստ, որտեղ գրված է, թե քանի մետր ասֆալտ արվեց, քանի մետր ջրագիծ փոխվեց, գերեզմաններ տանող ճանապա՞մրհը ասֆալտապատվեց, թե՞ հարսանյաց սրահ տանողը: Եթե այսպես գնա, Փաշինյանը կարող է կառավարության նիստերի ժամանակ կարդալ, թե որ խոզանոցի կամ գոմի տանիքը վերանորոգվեց, ցանկապատը կարգի բերվեց, կամ քանի տուկ խոտ մթերվեց:

Հասկանալի է, որ Փաշինյանն այդ երկարաշունչ ցուցակը կարդալով ուզում է ասել, թե, տեսեք՝ կառավարության սուբվենցիոն ծրագրով՝ համայնքների հետ համաֆինանսավորմամբ, ինչքան շատ աշխատանք է կատարվել, քանի համայնքում եւ քանի բնակավայրում ենք գործ արել, եւ, հետեւաբար, այդ համայնքների եւ բնակավայրերի բնակիչները պետք է երախտապարտ լինեն թե՞ իրեն, թե՞ ՔՊ-ին եւ այդ երախտապարտությունը դրսեւորեն առաջիկա խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ իրենց ձայնը տան ճանապարհ ասֆալտապատող, ջրագիծ փոխող, գազատար կառուցող, մանկապարտեզ ու դպրոց վերանորոգողներին: Փաշինյանը երեւի չգիտի, որ այդ ամբողջ աշխատանքն արվել է այդ նույն համայնքների, այդ նույն բնակավայրերի բնակիչների աշխատանքի եւ վճարած հարկերի հաշվին, ինքը դրա հետ ոչ մի կապ չունի կամ կապ ունի այնքանով, որ այդ հարկերից լիուլի վարձատրում է իրեն եւ իր փոքր խմբակին:

Փաշինյանը կառավարության նիստը փաստացի վերածում է նախընտրական քարոզչության հարթակի, եւ այն, ինչ անում է, իրականում ոչ թե կառավարության նիստ է, այլ նախընտրական միջոցառում: Նման երկարաշունչ ու տափակ տեքստ կարդալով, իրեն ու իր կառավարությանը նա դնում է ծիծաղելի վիճակի մեջ: Այնքանով ծիծաղելի, որ որեւէ նորմալ մարդ, նայելով այդ նիստերը եւ լսելով Փաշինյանի այդ ելույթը, կհասկանա, որ այս կառավարության գործունեությունը սահմանափակվում է ճանապարհ ասֆալտապատելով, մայթեզր սալարկելով, ջրագիծ փոխելով եւ գազատարի որոշ հատվածներ կառուցելով: Վերջ, սրանից բացի, այս կառավարությունը եւ դրա ղեկավարը ո՛չ անելիք ունի, ո՛չ էլ լիազորություն: Փաշինյանը թեեւ կոչվում է վարչապետ, բայց նրա լիազորությունների շրջանակն այնքան սահմանափակ է, որ նա կարող է լուծել առավելագույնը համայնքապետի մակարդակի հարցեր, իսկ նրա կառավարության անդամ կոչվածները ընդամենը այդ համայնքի ավագանու անդամի եւ կառուցվածքային ստորաբաժանումների անդամների լիազորություններ ունեն:

Բայց դա միայն իր եւ իր խմբակի խնդիրը չէ, Փաշինյանը Հայաստանի ինքնիշխանության մակարդակը պետության կարգավիճակից իջեցրել է համայնքի մակարդակի՝ Հայաստանին զրկելով մեծ եւ մասշտաբային ծրագրեր իրականացնելու հնարավորությունից: Հայաստանն իրավունք չունի մտածելու ո՛չ նոր ատոմակայանի, ո՛չ ջերմային կայանների, ո՛չ անգամ հզոր հիդրոէլեկտրակայան կառուցելու մասին, առավելագույնը թույլատրված է արեւային փոքրիկ կայաններ կառուցել: Հայաստանն իրավունք չունի մտածել արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու եւ արդյունաբերություն զարգացնելու մասին, քանի որ պետք է լինի սպառող եւ սպասարկող երկիր, Հայաստանը չի կարող լինել գիտություն եւ նորարարություն ստեղծող երկիր, այլ պետք է լինի բանկային եւ խաղային կապիտալի երկիր:

Եթե ընդհանրացնելու լինենք, ապա պետք է ասել, որ Հայաստանը երկրի մակարդակից իջեցվել է համայնքի մակարդակի, ինչի արդյունքում էլ Փաշինյանի լիազորություններն են իջեցվել համայնքապետի լիազորությունների մակարդակի, կառավարության նիստ կոչվածն էլ հնչում է շատ արխայիկ ու բովանդակությանը չհամապատասխանող, այն ավելի ճիշտ կլինի կոչել համայնքի ավագանու նիստ: Այդպես ավելի ազնիվ կլինի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԷԼ ԵՆ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի ավելի քան 30 քաղաքում տեղի ունեցավ տաքսու վարորդների գործադուլ: Որքան էլ ընթերցողին զարմանալի թվա, որ Ռուսաստանում նման բողոքի գործողություն հնարավոր է, դա կատարված փաստ է: Գործադուլի մասնակիցների հստակ թիվը հայտնի չէ, քանի որ գործադուլի ընթացքում որեւէ կոնկրետ բողոքի գործողություն չեղավ: Մարդիկ պարզապես պայմանավորվել էին մեկմեկու հետ ու այդ օրը՝ դեկտեմբերի 15-ին, աշխատանքի դուրս չեկան: Ակցիայից հետո փորձագիտական հանրույթում տեսակետներ հնչեցին, որ գործադուլը հատկապես ուղղված էր «Յանդեքսի» դեմ: Ի դեպ, այդ գործադուլը որեւէ լուրջ տեղաշարժ չարձանագրեց: Թերեւս պատճառն այն էր, որ գործադուլը, ինչպեսեւ նախապես պայմանավորվածություն էր եղել, անցավ «սուսուփուս»: Գործադուլավորների հիմնական պահանջները կապված էին «Յանդեքս տաքսիի» վարած քաղաքականության հետ: Վարորդները հայտարարում են, որ դժգոհ են գնագոյացման այն ալգորիթմից, որը կիրառում է ընկերությունը: Վստահ են, որ այն նվազեցնում է իրենց եկամուտները: Ավելի կոնկրետ՝ վարորդները դժգոհ են հատկապես իրենց հասած եկամտից: Այսպես, կարծում են, որ, անկախ այն հանգամանքից, որ ուղեւորի համար գինը կարող է ավելանալ երբեմն, հասույթից իրենց հասանելիք մասնաբաժինը քիչ է:

Արդյունքներ կարծես թե արդեն կան: Գործադուլից հետո Ռուսաստանի որոշ շրջաններում գնագոյացման մեջ վարորդի հասանելիք մասնաբաժնի հաշվարկման ալգորիթմում որոշակի փոփոխություններ են արվել: Սակայն մեծ մասամբ՝ նեռրայալ Մոսկվան եւ Ս. Պետերբուրգը, այս առումով որեւէ փոփոխություն չկա: «Յանդեքս տաքսին» էլ որեւէ կերպ չի արձագանքել գործադուլին: Ոլորտի հարցերով զբաղվողները դա ընկալել են որպես ցուցիչ, որ ոլորտում կան կուտակված խնդիրներ, եւ դրանցով պետք է զբաղվել: Ուշագրավ է այն, որ խնդիրն առաջացել է այն իրավիճակում, երբ կան խոսակցություններ, թե այլ խոշոր խաղացողներ էլ են ցանկանում մտնել տաքսի ծառայությունների շուկա: Մասնավորապես՝ սեփական տաքսի ծառայությունն է ուզում ստեղծել Wildberries-ը: Ներկայում «Մաքսիմն» է համարվում «Յանդեքսին» մրցակից, սակայն՝ միայն որոշ ռեգիոններում: Նոր ֆեդերալ խաղացողի ի հայտ գալը կարող է փոխել ուժերի դասավորությունը շուկայում: Ի դեպ, տաքսու վարորդների դժգոհությունները փորձել են նաեւ քաղաքական կուսակցությունները ներկայացնել, մասնավորապես ակտիվ է եղել ՌԴ Կոմկուսը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՀԻՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ «ԴԱԲՐՈ» ԿԱ ՎԵՐԵՎԻՑ

Հիշխանությունները շարունակում են Արեւմուտքի աջակցությամբ ժողովրդավարության իմիտացիա ստեղծել, սակայն Փաշինյանի բոլոր քայլերը Հայաստանը տանում են դեպի բռնապետություն: Եկեղեցու ներքին հարցերին միջամտելուց մինչեւ քաղաքական բանտարկյալներ, մարդու անձնական կյանքի գաղտնիության ոտնահարում: Իսկ վերջերս տեղեկություններ կան, որ քրեակատարողական հիմնարկներում սկսել են դաժան ու խտրական վերաբերմունք ցուցաբերել քաղաքական հողի վրա բանտարկված անձանց նկատմամբ. օրինակ՝ Վահագն Չախալյան, Նարեկ Սամսոնյան, Վազգեն Սաղաթելյան, Միքայել, Բագրատ եւ Արշակ սրբազաններ եւ այլն: Ինչը նախկինում չի եղել. ՔԿՀ-ներում, որպես կանոն, հարգալից են վերաբերվում քաղբանտարկյալներին:

Օրինակ՝ Վահագն Չախալյանին տեղափոխել էին չջեռուցվող պատժախուց, կամ՝ոմանց նստեցրել են թմրանյութեր օգտագործողների, կրիմինալ անձանց հետ: Հանձնուքներն են ուշ փոխանցում, եւ սնունդը թթված է հասնում կալանավորին, ծանրաբեռնված պատժախցերում են նստեցնում եւ այլն: Մեզ նաեւ հուշեցին, որ քաղաքական բանտարկյալներին կալանքի տանում են, որպես կանոն, ուրբաթ օրերը, որպեսզի հանգստյան օրերին նրանց դրսից սնունդ փոխանցել չկարողանան, եւ նրանք 2 օր մնան բանտային սննդի հույսին: Ի դեպ, տեսակցությունների պարագայում եւս խնդիրներ են ստեղծում: Օրինակ՝ բարերար Սամվել Կարապետյանի եղբորորդուն՝ Նարեկ Կարապետյանին, թույլ չեն տվել այցելել հորեղբորը՝ պատճառաբանելով, թե նա ընտանիքի անդամ չի համարվում:

Իրավապաշտպան **Նինա Կարապետյանցը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Նիկոլ Փաշինյանն օգտագործում է այն գործիքակազմը, որը նախկինում ես դատապարտում էի, ինչպես նաեւ ինքը, որպես քաղաքական բանտարկյալ, դատապարտում էր եւ քննադատում: Այն, ինչ տեղի է ունենում, ինձ համար նորարարություն չէ: Այն կիրառվել է բոլոր իշխանությունների ժամանակ, հատկապես՝քաղաքական բանտարկյալների դեպքում: Ես անգամ հիշում եմ, որ 2008-ին երիտասարդներին ձերբակալում ու կալանքի էին տանում եւ դիտավորյալ այնպիսի միջավայրերում էին պահում նրանց, որ մարդիկ կամա թե ակամա ընկճվում էին եւ հայտնվում հոգեբանական ծանր ու լարված վիճակում: Եթե Փաշինյանը գովելի է համարում ոստիկանության անհամաչափ ուժի կիրառումը, եթե նա այդ քայլից հիանում է, եթե համարում են, որ նորմալ եւ ընդունելի է արդարադատական համակարգի անարդար որոշումները, եւ դեռ մի բան էլ հիանում են այդ ամենով, ապա ինչո՞ւ պետք է քրեակատարողականներում այլ գործիքակազմ կիրառվեր: Այս ամենն այդ կոստյումի մեջ շատ սիրուն ձեւով տեղավորվում է: 2000-ականներից սկսած, քաղաքական բանտարկյալների նկատմամբ նման գործիքակազմեր կիրառվել են: 2018-ից հետո քիչ թե շատ իրավիճակն ուզում էր փոխվել, այդ հին մեթոդները մի պահ չէին կիրառվում, որովհետեւ այդ ժամանակ քաղաքական հրահանգ չկար, ի դեպ, այդ շրջանում դատարաններն էլ ակնհայտ ապօրինի որոշումներ չէին կայացնում, Ոստիկանությունն էր իրեն նորմալ պահում, սակայն եկավ մի պահ, որ նորից սկսվեց հին գործիքակազմն օգտագործվել, քանի որ վերեւից «դաբրո» կա: Այն, ինչ տեղի է ունենում, անթույլատրելի է: Անկախ այն բանից, թե ում մասին է խոսքը, անձին չի կարելի նվաստացնել, այն խոշտանգման նման մի պրոցես է, գրեթե խոշտանգում է»:

Երեք տարի քաղաքական դրդապատճառներով բանտարկված, Վանաձորի ընտրված համայնքապետ **Մամիկոն Ասլանյանն** էլ, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասաց. «Անկեղծ ասած, ինձ հետ նման երեւույթ չի հանդիպել, սակայն ամեն ինչ էլ կարող են անել, հատկապես, որ այս հարցերն օրենքով կարգավորվող հարցեր չեն: Եթե ցանկություն կա կալանավորների համար վատ պայմաններ ստեղծելու, ապա դա միանշանակ կարող են անել հեշտությամբ, բայց, օրինակ, խցակիցների հետ կապված խնդիրներ պարագայում մարդիկ կարող են ուղղակի պահանջել, որ խուցը փոխեն: Ինձ համար մեծ տարբերություն չի եղել, թե ես ում հետ նույն խցում կնստեմ: Ինձ հետ միասին եղել են տարբեր բնույթի մարդիկ: Վարդաշենը տարբերվում է նրանով, որ այնտեղ պաշտոնավորներ են: Ուսադիրներ կրողներ, զինվորականներ եւ այլն: Այնտեղ խայտաբղետ կոնտինգենտ չկա: Ինձ համար մեծ տարբերություն չի եղել, թե ես ում հետ կլինեմ նույն պատժախցում: Ինտելիգենտ էլ կար մեզ հետ, ոչ ինտելիգենտ էլ: Բայց նորից եմ ասում՝ այն, ինչը որ կապված է կամայականության հետ, ապա ցանկության դեպքում հեշտությամբ կարող են իրականացնել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ, ՄԻ ՄԵՂԱԴՐԵՔ ԻՆՁ ԻՄ ԱՐԱԾԻ ՀԱՄԱՐ



Բաքվի բանտում 5 տարի ապօրինաբար գերի պահվող լիբանանահայ Վիգեն Էուլջեքջյանի կինը՝ **Լինդա Էուլջեքջյանը**, որն ամուսնուն ներում շնորհելու եւ ազատ արձակելու խնդրանքով դիմել էր Ադրբեջանի առաջին տիկին Մեհրիբան Ալիեւային, պատասխանեց մեր հարցերին: Հետաքրքրվեցինք՝ Ձեր նամակում նկարագրել եք թե՞ Վիգենի եւ թե՞ Ձեր ընտանիքի տառապալից իրավիճակը եւ ակնկալել, որ, որպես մայր, նա կընդառաջի Ձեր խնդրանքին, որեւէ արձագանք ստացա՞լ եք հայատյաց ռեժիմի ներկայացուցիչներից: «Ես այս նամակն ուղարկել եմ ոչ քաղաքական պատճառներով. դա հուսահատ կնոջ կողմից մարդասիրական կոչ էր: Դեռ պատասխան չեմ ստացել: Խնդրում եմ, մի մեղադրեք ինձ իմ արածի համար»: Դուք ազգությամբ հայ չեք, լիբանանցի եք: Լիբանանի կառավարությունն աջակցում է Ձեզ Վիգենի ազատ արձակման, շուտափույթ վերադարձի հարցում, եւ արդյո՞ք տեղյակ են Ալիեւային հղած նամակի մասին: «Այո, Լիբանանի պետությունը, իր հայ ներկայացուցիչների միջոցով, հետեւում է ամուսնուս գործին, բայց ոչ ոք տեղյակ չէ իմ նամակի մասին: Ես այն ուղարկել եմ օգոստոսի 1-ին, բայց այն միայն հիմա է հրապարակվել, հանրայնացվել»:

- Իսկ ինչո՞ւ հիմա, ավելի քան 4 ամիս անց, երբ Ձեր ամուսնու վիճակն այսքան ծայրահեղ վատ է դարձել:

- Ադրբեջանի նախագահի՝ համաներման մասին ելույթն ինձ դրդեց հանրայնացնել իմ ուղերձը:

- Իսկ Ձեր օտարազգի՝ ոչ հայ լինելը, ինչ եք կարծում՝ կնպաստի՞, որ հարցը միջազգային ինչեղություն ստանա, նաեւ՝ Վիգենի միջազգային փաստաբանների կողմից գործադրվող ջանքերի շնորհիվ:

- Հուսով եմ, որ իմ ձայնը կհասնի ձեզ, քանի որ ամուսնուս կյանքը վտանգված է:

- Եղան նաեւ Ձեզ քննադատողներ, թե ինչու եք դիմել Ադրբեջանի նախագահի կնոջը, փորձեցին քաղաքականացնել, քննադատել Ձեզ, արդեն անդրադարձել եք այդ քննադատություններին եւ հորդորել Ձեր կոչն ընկալել ոչ թե որպես զայրույթի եւ քաղաքականության դրսեւորում, այլ արձագանքել կարեկցանքով՝ հասկանալով, որ նման պահերին ողորմածությունը կարող է բուժել վերքերը, այլ ոչ թե խորացնել դրանք:

- Ինձ ընդհանրապես չի մտահոգում քննադատությունը: Ամեն մեկն ապրում է խաղաղ իր ընտանիքի հետ: Հուսով եմ, որ բոլորը հասկանում են իմ դիրքորոշումը: Ես ներում եմ հայցել ամուսնուս համար՝ մարդասիրական, այլ ոչ թե քաղաքական պատճառներով:

Նյութերը՝ Արա ԱԼՈՅԱՆԻ

Հրաշք կլինի՞ հայերի համար. Ադրբեջանը համաներում է հայտարարել

Ադրբեջանի խորհրդարանը՝ Միլլի Մեջլիսը, դեկտեմբերի 19-ի նիստում քննարկել է «Սահմանադրության եւ ինքնիշխանության տարվա կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» խորհրդարանական որոշման նախագիծը: Քննարկումներից հետո որոշման նախագիծն ընդունվել է առաջին ընթերցմամբ: Նշվում է, որ համաներումը կիրառելու նախաձեռնությունը ներկայացրել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Հատկանշական է, որ նախօրեին Եվրախորհրդարանն Ադրբեջանում, Նիգերիայում եւ Գվինեա Բիսաուում մարդու իրավունքների իրավիճակի մասին բանաձեւ է ընդունել, որով պահանջել է ազատ արձակել Ադրբեջանի «Ժողովրդական ճակատ» կուսակցության նախագահ Ալի Քերիմլիին: «Եվրախորհրդարանի պատգամավորները դատապարտում են ինչպես Ադրբեջանի իշխանությունների կողմից ազգային անվտանգության դրույթների չարաշահումը՝ որպես դատական հետապնդման գործիքներ, այնպես էլ երկրում խոսքի ազատության, խաղաղության քարոզչության եւ հանրային քննադատության քրեականացումը»,- ասված է բանաձեւում: Ադրբեջանցի խորհրդարանականներն այս բանաձեւին եւս անդրադարձել են երեկվա նիստում, բնականաբար, մեծ հիստերիա բարձրացնելով:

Մասնավորապես, Եվրախորհրդարանի բանաձեւի վերաբերյալ քննարկման է ներկայացվել հայտարարություն, որն այնուհետ դրվել է քվեարկության եւ ընդունվել: Փաստաթղթում նշվում է, որ «կեղծ» եւ «անհիմն» մեղադրանքների միջոցով Ադրբեջանի միջազգային հեղինակությանը վնաս հասցնելու փորձերը դատապարտված են ձախողման: Թե կոնկրետ ում է վերաբերելու համաներումը, առայժմ հայտնի չէ, բայց այս որոշումը որոշակի, թեկուզ՝ աղոտ, հույս է ուրվագծում Բաքվի բանտերում գտնվող հայ գերիների ճակատագրի առումով, որոնք այնտեղ հայտնվել են կատարյալ մեկուսացման մեջ. որեւէ միջազգային անկախ կառույց նրանց չի տեսակցում: Նրանց պահման, առողջական եւ հոգեբանական վիճակի մասին տեղեկություններ չկան:

Բաքուն պաշտոնապես հաստատում է 23 հայ քրիստոնյաների գերեվարման փաստը, որոնցից 17-ն այնտեղ է հայտնվել Արցախի դեմ Ադրբեջանի սեպտեմբերյան ագրեսիայից հետո: Նրանց թվում են Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչները՝ Արցախի նախկին պետնախարար, բարերար Ռուբեն Վարդանյանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, Արցախի նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը, ԼՂ ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանը, Արցախի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանն ու Արայիկ Հարությունյանը: Բաքվում շարունակվող շինծու դատավարության շրջանակում պետական մեղադրողներն արդեն ցմահ ազատազրկում են պահանջել Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանի եւ Արցախի նախկին պետնախարար, գործարար, բարերար Ռուբեն Վարդանյանի համար: Արկադի Ղուկասյանի եւ Բակո Սահակյանի դեպքում պահանջել են 20 տարի՝ նրանց տարիքով պայմանավորված, իսկ մյուսների դեպքում՝ 16-19 տարի:

Ի դեպ, հայ բանտարկյալների ադրբեջանցի փաստաբաններն իրենց վերջին ելույթներում խնդրել են արդարացնել իրենց պաշտպանյալներին: Օրերս էլ հայտնի դարձավ, որ Բաքվի բանտում գերության մեջ գտնվող լիբանանահայ Վիգեն Էուլջեքջյանի կինը՝ Լինդան, դիմել է Ադրբեջանի առաջին տիկին, երկրի փոխնախագահ Մեհրիբան Ալիեւային՝ իր ամուսնուն ազատ արձակելու ներում շնորհելու խնդրանքով: Մնում է սպասել հրաշքի, որ թեկուզ մեկ հայ ազատ կարձակվի այս համաներման արդյունքում, ինչը կարող է դառնալ, Ադրբեջանի պատկերացմամբ՝ իր «հեղինակության» բարձրացմանն ուղղված քայլ, ոչ թե հակառակը, ինչպես պնդում են ալիեւյան ռեժիմի մոլորյալ օրենսդիրները:

«Մացառուտներում երգողները. սերիալ՝ կուսակրոնության մասին

Սերիալը, որն ուզում ենք ներկայացնել, ավստրալացի կին գրող Քոլին Մաքլոուի «Մացառուտներում երգողները» վեպի համանուն էկրանավորումն է: Այն առաջին անգամ ցուցադրվել է 1983 թվականին եւ շատ արագ դարձել կուլտային ժապավեն համաշխարհային կինոարվեստում՝ շնորհիվ ներկայացրած պատմության խորունկ եւ էմոցիոնալ բովանդակության, դերասանական փայլուն խաղի եւ արծարծած բարդ բարոյական հարցերի: Դեպքերը զարգանում են 20-րդ դարի առաջին կեսին՝ Ավստրալիայի գյուղական բնակավայրերից մեկում: Այն պատմում է Քլիրի ընտանիքի մասին, որը տեղափոխվում է ռանչո: Հանդիսատեսը սերիալում կհանդիպի գերդաստանի մի քանի սերնդի պատմությանը՝ իր ուրախություններով ու տխրություններով, նվաճումներով ու կորուստներով: Դրամատիկ հիմնական կոնֆլիկտը կառուցված է Մեգի Քլիրիի ու կաթոլիկ վարդապետ, իսկ հետագայում նաեւ կարդինալ Ռալֆ դե Բրիկասարի սիրո պատմության շուրջ: Նրանց զգացմունքները բախվում են կրոնական ու սոցիալական արգելքներին, ինչը նրանց սերը դարձնում է եւ խոր, եւ ողբերգական: Հիմնական թեման սիրո եւ պարտքի գիտակցման պարադոքսն է: Ռալֆը, որ իրեն նվիրել է եկեղեցուն, ստիպված է լինում ընտրել Աստծուն ծառայելու եւ Մեգիի սիրո միջեւ, ինչը եւ դառնում է սյուժեի առանցք: Դերերում հանդես են եկել Ռիչարդ Չեմբեռլեյնը, Ռեյչել Վորդը, Ջին Սիմոնսը, Բարբարա Սթեւնիկը, Քրիստոֆեր Պլամերը եւ այլք: Սերիալը հեռավոր 1984-ին ստացել է «Ոսկե գլոբուս»՝ միանգամից մի քանի անվանակարգում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ոչ թե մեծություններին հետ եմ համեմատել, այլ օրինակներ եմ բերել

ՈՒՇԱԴՐ

Դանրությունը սուր քննադատության ենթարկեց Զանգակատուն գյուղի դպրոցի բակում տեղադրված Պարույր Սեւակի արձանը, որի հեղինակը քանդակագործ Լեւոն Թոքմաջյանն է: Հանրային ճնշումն այնքան մեծ էր, որ գյուղում քվեարկության դրեցին հարցը, եւ այն ապամոնտաժելու որոշում կայացվեց: Բայց հիմա ինչ-որ իշխանական շրջանակներ իրենց «թեւերը փռել» են քանդակագործ Լեւոն Թոքմաջյանի վրա, որը երբեք էլ աչքի չի ընկել գեղագիտական բարձր ճաշակի ու արժեքավոր գործեր ստեղծելու մեջ: Եվ նրա ստեղծագործությունները դժվար է գլուխգործոց համարել, թեեւ, իհարկե, համաշխարհային աղմուկն էլ տեղին չէր: Նկատեցինք, որ Նիկոլ Փաշինյանի կինը, որն առաջադեմ երեւալու, մարդկանց «կրթելու» մոլուցքով է տառապում, արձանի մասին «խոհափիլիսոփայական» գրառումներ է տեղադրել իր էջում՝ մեջբերումներ է արել ԱՄՆ-ում ապրող մի անձ, որը դաշնակցական է, բայց նիկոլական հայացքներ ունի: Խոսքը Սասուն Քոսյանի մասին է, որն իր էջում Լեւոն Թոքմաջյանին համաշխարհային մեծությունների հետ էր համեմատել եւ Զանգակատան բնակիչներին ու արձանը քննադատողներին իր էջում ամոթանք տվել:

Նա մասնավորապես գրել էր. «Ֆրանսիական Գրական ընկերությունը 1891-ին պատվիրեց Ռոդենին ստեղծել ֆրանսիացի գրական հսկա, հայտնի վիպասան Օնորե դը Բալզակի հուշարձանը: Ռոդենը յոթ տարի ուսումնասիրեց Բալզակի կյանքն ու ստեղծագործական ժառանգությունը, բայց ավանդական դիմաքանդակի փոխարեն ստեղծեց արմատականորեն տարբեր, վանականի զգեստով հզոր ֆիգուր, որը նպատակ ուներ ներկայացնելու գրողի «ստեղծագործական ուժը» եւ էներգիան, այլ ոչ թե նրա ֆիզիկական արտաքինը:

Քննադատներն այն անվանեցին «անձեւ զանգված», «դոդոշ պարկի մեջ» եւ «ձնեմարդ»: Գրական ընկերությունը հրաժարվեց ընդունել գործը: Ռոդենը գիպսե աշխատանքը տարավ իր տուն: Միայն իր մահից տասնամյակներ անց այն ստացավ ճանաչում ու ձուլվեց որպես բրոնզե արձան: Այժմ այն համարվում է ժամանակակից քանդակագործության գլուխգործոց: Իսկ ո՞ւր են քննադատները...»: Ապա հավելել էր. «Զանգակատուն գյուղի գյուղացիների 85%-ի քվեարկությամբ որոշվել է, որ Լեւոն Թոքմաջյանի քանդակը կհեռացվի գյուղից: Իսկ գյուղացիներն ինչպե՞ս կբարեհաճեն քվեարկել Սոկրատեսի փիլիսոփայության մասին: Իսկ Արթյուր Ռեմբոյի բանաստեղծություններին մասին ի՞նչ կարծիք ունեն:

Ապա թող իրենց քվեները գցեն Կանդինսկու նկարների մասին, Մալերի 2-րդ սիմֆոնիայի մասին...

Ինչպիսի խայտառակությո՛ւն: Մարտնչող տգիտությունը հաղթեց բարձր արվեստին: Ամոթ ձեզ, դուք արժանի չեք ինքնատիպ արվեստի, թող ձեր երեխաները հանկարծ չշեղվեն քառակուսի մտածողությունից, հանկարծ չգայթակղվեն ու ձեր տափակ, սահմանափակ ճաշակից դուրս ինչ-որ բանի վրա ուշադրություն չդարձնեն: Հանկարծ միջակությունից չազատագրվեն: Արագ հանեք տարեք այդ քանդակը՝ ավելի արժանի վայրում դրեք, անարժաններ»: Առնվազն փարիսեցիություն ու սրբապղծություն է Ռոդենի քանդակները Թոքմաջյանի քանդակների հետ համեմատելը: Մենք ԱՄՆ-ում բնակվող Քոսյանից փորձեցինք մեկնաբանություն ստանալ, թե ինչպես կարելի է Լեւոն Թոքմաջյանին համաշխարհային մեծությունների հետ համեմատել: Նա մեզ հետ զրույցում արդարացավ. «Ոչ թե մեծությունների հետ եմ համեմատել, այլ օրինակներ եմ բերել, որ կան արվեստի շատ ուղղություններ, որոնք դուրս են ավանդական ոճից, բայց նույնպես արժեքավոր են եւ երբեմն չեն հասկացվել նույն կերպ: Գեղեցկությունը սուբյեկտիվ է, բայց արվեստը միայն գեղեցկություն արտահայտելու համար չէ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Փոխանակ 4-րդ կարգի անասնակեր ցորեն ներկրեք, աշնանացանով զբաղվեք

Ըստ էկոնոմիկայի նախարարության՝ հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 2 040 816,8 հա, որից վարելահող՝ 440 591,8 հա: Նույն նախարարության տվյալներով, ՀՀ-ում ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերը 156 հազար 500 հեկտար են: Հայաստանում չոռոգվող հողատարածքներն արդյունավետ է օգտագործել աշնանացան ցորենի մշակության համար: Հացահատիկի, հատկապես՝ ցորենի մշակությունը կարեւոր է Հայաստանի պարենային անվտանգության տեսանկյունից: Արցախում մշակվող տասնյակ հազարավոր հեկտար ցորենի արտերի կորստից հետո ցորենով Հայաստանի ինքնաբավության ցուցանիշն ավելի է նվազել:

Վերջերս Ադրբեջանի, ապա Վրաստանի տարածքով, երկաթուղով Հայաստան ներկրվեց ղազախական ցորենի խմբաքանակ, սակայն պարզվեց, որ այն 4-րդ կարգի ցորեն է, պիտանի չէ հացի արտադրության համար: Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը փոխանակ Այրում կայարանում դիմավորեր Ադրբեջանով ներկրված ղազախական անորակ ցորենի վագոնները, պետք է ի պաշտոնե նպաստի Հայաստանում աշնանացանի հեկտարների ավելացմանը: Սակայն տարեցտարի աշնանացանի հեկտարները նվազում են:

Աշունն ավարտվեց, աշնանացանի համար լավագույն ժամանակահատվածը՝ նույնպես: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել Տավուշի մարզում ցանված աշնանացան ցորենի հեկտարների վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Համայնքապետարանների կողմից ներկայացված տեղեկատվությունների համաձայն՝ 2025թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ օպերատիվ տվյալներով՝ մարզում կատարվել է 1749,0 հա աշնանացան, այդ թվում՝ Բերդ համայնքում -777,2 հա, Նոյեմբերյան համայնքում -671,6 հա, Իջեւան համայնքում- 300,2 հա: Աշնանացանի աշխատանքները շարունակվում են»:

Հիմա տեսնենք, թե անցյալում ինչպես է եղել. 2016 թվականին Տավուշի մարզում աշնանացան ցորենի ցանքերը կազմել են 5684 հեկտար: Անցած 9 տարում Տավուշում աշնանացանի հեկտարները մեծ չափով նվազել են: Այս տարի գործում է աշնանացան ցորենի մշակությանն աջակցության պետական ծրագիր, որով մշակվող ամեն հեկտար աշնանացանի դեպքում մշակողին տրվում է 80 հազար դրամ աջակցություն: Սակայն այդ օգնությունը հատկացվում է միայն պետական հավաստագիր ունեցող ցորեն ցանելու դեպքում: 2023 թվականին պետական աջակցությամբ աշնանացան ցորենի հեկտարի հաշվով պետական բյուջեից մշակողին 70 հազար դրամ էր տրվում, իսկ էլիտար սերմացուով ցանելու դեպքում՝ 120 հազար դրամ:

Վերին Ծաղկավան համայնքի նախկին ղեկավար, այժմ Բերդի համայնքապետարանի մասնագետ Կամո Չոբանյանը տարիներ շարունակ զբաղվում է Ռուսաստանից որակյալ սերմացուի ներկրմամբ, հացահատիկի մշակությամբ: Նա մեզ ասաց, որ անցյալ շաբաթ ինքը 150 տոննա սերմացու ցորեն է տրամադրել Իջեւան համայնքի Կիրանցի, Սարիգյուղի, Սեւքարի, Այգեհովտի, Աչաջրի, Վազաշենի ֆերմերներին: Որակյալ ցորենի սերմացուն վաճառվում է կիլոգրամը 250 դրամով, մեկ հեկտար ցանելու համար պահանջվում է 200 կիլոգրամ ցորեն: Կ. Չոբանյանը հայտնեց, որ այս տարի ինքը հայրենի Վերին Կարմիրաղբյուր գյուղում ցանել է 8 հեկտար ցորեն, իսկ ամբողջ գյուղում ցանվել է շուրջ 150 հեկտար աշնանացան ցորեն: Մեկ հեկտար վարի համար տրակտորիստին վճարում են 45 հազար դրամ, իսկ Բերդ համայնքում՝ 55 հազար դրամ: Պետության կողմից ցորենի մշակության համար տրվող օգնությունը՝ մեկ հեկտարի հաշվով հատկացվող 80 հազար դրամը, չի բավարարում անգամ ցորենի սերմի ու աշնանացանի վարի համար վճարելուն: Մինչդեռ հողագործը պետք է վճարի նաեւ արտհնձի ու հնձված ցորենը դաշտից տեղափոխելու համար: Խնդիր է այն, որ Տավուշում ցանվող ցորենի դաշտերը չեն ոռոգվում, վերջին տարիներին ձմռանը ձյուն քիչ է տեղում, որի հետեւանքով ցորենը լավ չի աճում, բարձր բերք չի ստացվում: Բացի այդ, ցորենի դաշտերը երկար տարիներ քիմիական բուժանյութերով եւ պարարտանյութերով չեն մշակվում, այդ պատճառով արտերը տարիներ շարունակ լի են մոլախոտերով, ցորենի դաշտերում բուն են դնում դաշտային մկներ, որոնք իրենց խոր բները լցնում են արտերի ցորենով: Գյուղատնտեսական երկիր Հայաստանում գյուղնախարարություն չկա, իր կազմում մի քանի գյուղատնտեսական վարչություններ ունեցող էկոնոմիկայի նախարարությունը եւ նախարար Գեւորգ Պապոյանը հետամուտ չեն բուսաբուծության, մասնավորապես՝ աշնանացանի մշակության գործում առկա հիմնախնդիրների լուծմանը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՄ ԱՆՆԱԽԱԴԵՊ



Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Նիկոլ Փաշինյանի հակաեկեղեցական արշավի ողջ հմայքն այն է, որ այդ պայքարում ամեն ինչ աննախադեպ է: Ինչ անում է՝ նորություն է… Նորություն՝ նորության հետեւից, հրաշք՝ հրաշքի: Դուք տեսնո՞ւ էիք երբեւէ, որ պաղավատ եւ «Բենթլի» ունեցող 10 եպիսկոպոս լցվեին գազելն ու գնային Մայր Աթոռ: Գնալը՝ դեռ ոչինչ… Դուք խմբով վազող եպիսկոպոսներ տեսնո՞ւ էիք: Իհարկե, աննախադեպ էր: Չզարմանաք, ուրեմն, որ առաջիկա կիրակի Նիկոլը եպիսկոպոսների հետ դուրս գա հեծանիվ քշելու: Այո, այո, հենց փիլոնով: Դա նույնպես աննախադեպ կլինի, բա ինչ…

Ի դեպ՝ փիլոնի մասին: Փիլոնը եկեղեցականի մարմինը փաթաթող եւ կրծքի վրա ճարմանդով ամրացվող սեւ կտավից կարված զգեստ է: Գործածվում է ժամերգությունների եւ աստվածապաշտական այլ արարողությունների ժամանակ: Ծայրագույն վարդապետները եւ եպիսկոպոսները (ինչպես եւ կաթողիկոսը), որպես պատվո նշան, կրում են մանուշակագույն ծաղկյա, իսկ վարդապետները՝ սեւ ծաղկյա փիլոններ: Սեւ ծաղկյա փիլոնները, որպես պատվո նշան, հայրապետական կոնդակով շնորհվում են նաեւ ավագ քահանաներին: Ասել է թե՝ Հայրապետն իր մի կոնդակով կարող է փիլոնահան անել հակականոնական ընթացքի մեջ ընկած ուզածդ եկեղեցականի: Ականջդ կանչի, Վլադիմիր Գասպարյան, ասում էր՝ օրենքը խախտող ոստիկանին պետք է հանել համազգեստի միջից: Եվ ճիշտ էր ասում: Վլադիմիր Գասպարյանին մենք հասկանում էինք, մարդն ի վերջո ոլորտի պատասխանատուն էր եւ ինքն էր որոշում՝ արժանի՞ է տվյալ ոստիկանը համազգեստ կրելու, թե՞ ոչ: Նիկոլն այս հարցում էլ է նորարարություն կիրառել: Չլինելով հոգեւոր ոլորտի պատասխանատուն՝ նա ընկել է հոգեւորականների հետեւից, որ տեսնի՝ ո՞վ է արժանի փիլոն կրելու եւ ո՞վ՝ ոչ: Իսկ ինչպե՞ս է դա անում: Սա արդեն պատմելու բան չէ, բայց կփորձեմ մի կերպ պատմել՝ պահելով բարոյականության գոնե ամենաեզրային կարմիր գծերը: Նիկոլը, ուրեմն, հատ-հատ բարձրացնում է հոգեւորականների փեշերը, որ տեսնի՝ տակն ի՞նչ կա: Ով ընդդիմանում է, բանտարկում է, ո՞վ՝ չէ, հայտարարում է յուրային եւ ընդգրկում հակաեկեղեցական պայքարի մեջ՝ որպես առաջամարտիկ: Եվ հիմա ինչքան կարգալույծ հռչակված քահանա ու կասեցված եպիսկոպոս եք տեսնում, բոլորը Նիկոլի կողմնակիցներն են, այլ խոսքով՝ Նիկոլը նրանց ճանաչում է բոլոր կողմերից եւ անգամ փիլոնի տակից: Նիկոլը նրանց այնքան լավ է ճանաչում, որ կարող է գազելներով տեղից տեղ տանել, ոստիկաններով շրջապատված՝ շարքով քայլացնել, խառնել իր վճարովի, թափառական «հավատացյալների» հոտին ու պատարագ անել տալ Հայաստանյայց տարբեր եկեղեցիներում: Դուք պիտի տեսնեիք Հովհաննավանքի երբեմնի քահանայի մուտքը Մայր Աթոռի տարածք: Դա աննախադեպ էր: Էդ «փիլոնավոր» ախմախին, ուրեմն, կանգնեցրել են շարքի առջեւում, կողքին՝ չստացված դերասան Գնելը, հետեւից՝ թափառախումբը (մոտ 50 մարդ), եւ ոստիկանական կուռ շարասյունները՝ այս թափորի աջ ու ահյակ թեւերին: Այդ խողովակաձեւ պատկերն ինձ ավգյան ախոռի խցանված կոյուղի էր հիշեցնում: Հիրավի աննախադեպ բան: Ես արդեն 65 տարեկան հավատացյալ եմ, բայց այդ ձեւով Մայր Աթոռ մտնելու տեսարանի ականատես չէի եղել: Երբ ոստիկանական շարասյունը սրանց բարեհաջող կերպով հասցրեց մայր տաճարի աջ կողմը, որտեղ մի քանի անհավատներ էին հավաքվել, եւ փակեցին մեր ճանապարհը դեպի այդ հետաքրքրաշարժ թափորը, ես ոստիկանին հարցրի՝ այս ո՞ւմ եք բերել, ովքե՞ր են նրանք: Տեղում «ատկագ» եկավ՝ մենք չենք բերել, մենք ընդամենը կարգ ենք պաշտպանում:

- Տղա ջան, ախր ես իմ աչքով տեսա, թե ինչպես բերեցիք:

- Լավ չես տեսել, հոպար, մենք կարգ պաշտպանելով ենք բերել:

- Տղա ջան, կարող ա՞ դու էլ ես աննախադեպ, ճանապարհ տուր, տեսնեմ՝ դրանք ինչ են ուզում, որ այդպես շարքով եկան:

- Լավ, էլի, հոպար, հայ քրիստոնյա են, եկել են աղոթելու:

- Աղոթելո՞ւ, բայց ինչո՞ւ են շարքով եկել, այն էլ՝ կարգալույծ արված քահանայի ու չստացված դերասան Գնելի գլխավորությամբ, այն էլ՝ ձեր խողովակով:

Ոստիկանն աչքերը փախցրեց… Հասկանում էր, գիտեր ամեն ինչ: Ինքն էլ իր կյանքում դեռ այսպիսի հանձնարարություն չէր կատարել՝ հավատացյալներին ուղեկցել եկեղեցի:

Մայր Աթոռի բակում մեծ բախում տեղի չունեցավ: Դա՝ շնորհիվ Վեհափառ Հայրապետի հորդորի, այնտեղ ներկա քաղաքական ուժերի ներկայացուցիչների, հայտնի մարդկանց եւ, իհարկե, ոստիկանության: Մի քիչ էլ բախտներս բերեց, որ ես էշի հարսանիքի քավորը՝ Նիկոլն անձամբ, այնտեղ չէր… ՔՊ-ական եւ մերձքպական մի քանի թափթփուկ, եւ միայն այդքանը: Ասում էին՝ Նիկոլը լայվով է հետեւում այս ամենին, որ հենց իր թիմը մտնի Վեհարան, իսկույն ժամանի եւ Վեհափառին հանի Վեհարանից: Վեհարանը՝ Վեհի… Բա իսկական առաջնորդը վճռական ճակատամարտի դաշտը կլքե՞ր: Մի խոսքով՝ Նիկոլը խայտառակ պարտություն կրեց Մայր Աթոռի բակում: Ու երբ նայում ես, թե ումից կրեց այդ պարտությունը, դա էլ է աննախադեպ դառնում: Իսկ կընդունի՞, արդյոք, որ պարտվեց այս էշի հարսանիքում: Չեմ կարծում: Էս է՝ մի աննախադեպ բան էլ կմտածի: Մի քանի օր առաջ Վաղարշապատում իր արեւին «հաղթել էր» տղեն: Ու այդ ի՞նչ ՔՊ-ական քաղաքապետ ունեն, որ չկարողացավ, ընտրություններից հաշված օրեր անց, մարդ ապահովել ի պաշտպանություն իր հակաեկեղեցական ընթացքի եւ ՔՊ-ական հոգեւորականների: Մենք արդեն տեսել ենք այս թեմայով մարզպետ հեռացնելը: Հիմա տեսնենք՝ ինչ է անելու Վաղարշապատ խոշորացված համայնքի «ընտրված» համայնքապետին: Բա հո չի՞ ասելու՝ հա, ես եմ պարտվել: Դա նույնպես աննախադեպ կլինի:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 20.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԱՆԵՔ ՁԵՐ ՉՈՔԱՆԻ ԳԼԽԱՐԿՆԵՐԸ, ԴԵՆ ՆԵՏԵՔ ՔՈՌԻ ԱԿՆՈՑՆԵՐԸ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Նավթի հայրենիքից նոր ազդակ ուղարկվեց ի սփյուռ աշխարհի. Ազերբայջանում Ալիեւը համաներմամբ բանտերից ազատ կարձակի նրանց, ովքեր ճաղերի հետեւում են հայտնվել հայ սպանելու մեղադրանքով: Մեր եռանդուն վարչապետին չենք հարցնում՝ լսե՞լ ես, ինչ ես պատասխանելու, ինչ ես անելու: Պատասխանն ու անելիքը կանխավ հայտնի են՝ լսել է եւ լռելյայն խոնարհությամբ կընդունի հերթական շառաչուն ապտակը: Եղբայրական մի ապտակ եւս՝ խաղաղության խաչմերուկում շվարած դոնկիխոտին:

Ահա ինչու հարցն ուղղում եմ նիկոլի աղանդի հետեւորդներին, «քպլոյախմբի» կարկառուն եւ ոչ այնքան կարկառուն ներկայացուցիչներին. «Հարգելիներս, լսե՞լ եք, դո՞ւք ինչ եք մտածում «հումանիստական» նոր քայլի մասին: Թե՞ ունեք ձեր պատրաստի պատասխանը, որ աչք եք խոթում առիթ-անառիթ. «Բայց չէ՞ որ մենք էլ ասֆալտ ենք փռում»: Այո, դուք շարունակում ենք միայն ասֆալտ փռել, դուք ու ձեր առաջնորդը, իրոք որ, ասֆալտ փռողի տեսք ու նկարագիր ունեք, այսօր կարողանում եք ասֆալտ փռել, մեկ-մեկ էլ՝ ասֆալտին փռել նրանց, ովքեր ձերոնցից չեն: Դուք հասկանո՞ւմ եք, որ ձեր փռած ասֆալտապատ այդ ճանապարհով բանտից ազատված մարդակերները 500 հազար ազերիների հետ Արեւմտյան Ազերբայջան հռչակյալ մեր տարածքներ կներխուժեն՝ ձեր նիկոլի ու ձեր խոնարհ թույլտվությամբ: Այդքան միամի՞տ եք, որ հավատաք, թե կգան ու մեզ հետ եղբայրաբար կապրեն: Դուք չե՞ք լսում, չե՞ք տեսնում նրանց ասածն ու արածը: Հանեք ձեր չոքանի ականջակալներով գլխարկները, դեն նետեք քոռի ակնոցները՝ գուցե հասկանաք գալիք աղետը: Այդ ժամանակ գուցե պատասխանեք, թե Ադրբեջանում 10-11-րդ դասարանի աշակերտների շրջանում հայտարարված շարադրությունների մրցույթով ով ավելի լավ նյութ կգրի՝ «Հայաստանն ադրբեջանական հող է» թեմայով, մեզ ինչ է հուշում: Կամ՝ ինչո՞ւ մանկապարտեզներում, դպրոցներում բեմադրություններ են դնում, որոնք հագեցած են հայերին սպանելու եւ տանջամահ անելու տեսարաններով:

Վերջերս Բաքվի սլավոնական համալսարանում կազմակերպվեց «Արեւմտյան Ադրբեջան» կլոր սեղան-քննարկում՝ Ալիեւի հովանավորությամբ ու ուղերձով, ուր կարմիր թելի պես տարվում էր այն միտքը, որ Արեւմտյան Ադրբեջանը պետք է ներկայացվի որպես պատմականորեն ադրբեջանական տարածք, որտեղ ներկայում գտնվում է Հայաստանը: Էլի՞ օրինակներ բերեմ: Ախր, դրանք բազմաթիվ են: Դուք այսքանին պատասխանեք: Չե՞ք հասկանում, որ ծանրածանր այս ժամանակաշրջանում թշնամու հետ ներդաշն գործող ձեր կառավարությունը չի նկատում արտաքին սպառնալիքները, դրանք ներկայացնում է որպես նոր հաջողություններ: Իսկ ձեր գլխավոր «Հաջողակը» միակ սպառնալիքը տեսնում է... հայ ազգի մեջ: Ու որպեսզի ջլատի, զրոյական կետի հասցնի (իր սիրած կետին, որից հետո ամեն ինչ զրոյի է վերածվում) հայության դիմադրողականությունը, կյանքի ու մահվան պայքարի է ելել մեր ամենահզոր ազգապահպան բաստիոնի՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ: Թքած, թե քաղաքացիական բախումներն անխուսափելի կլինեն: Առաջնորդին հետաքրքրում է միայն, թե ինչպես որպե առաջ երկիրը ոսկե սկուտեղով «մատուցանի» անարգ «բարեկամին»: Ահա, այստեղ է նաեւ, որ երկու եղբայրների («Հրապարակի» խմբագիր Արմինե Օհանյանի քնքշնվաղ բնորոշմամբ)՝ Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիեւի շահերը համընկնում են: Ահա ինչու է Փաշազադեի միջոցով (նա է հայտարարել՝ «հայկական եկեղեցին մեծ սպառնալիք է տարածաշրջանային երկրների համար) Ալիեւը շտապեցնում գործելու վերջին գլխավոր, անշուշտ՝ իր եղբայր նիկոլի համար կործանարար գրոհը մայր եկեղեցու դեմ:

Եվ դուք պատրաստվում եք մասնակցե՞լ ազգադավ ու խելահեղ ձեռնարկին: Փորձում եմ կռահել վերահաս իշխանազրկումից հետո արտաբերելիք ձեր արդարացումները. «Դե, մենք ի՞նչ անեինք՝ ճար չունեինք»: Դա, իհարկե, ձեզ չի ազատելու պատասխանատվությունից: Որովհետեւ, ժողովրդական խոսքով ասեմ, ձեր չունեցած «ճարը» չի տանում ժողովրդի «չարը»: Այնպես որ՝ ճարներդ գտեք, իզուրթոզներդ հավաքեք ու հեռացեք: Վստահ եղեք՝ ժողովրդի սրտում խրված «փուշը» հանող հայրենասեր զավակներ ունենք, կգան ու մեզ փրկելու «ճարը» կգտնեն: Այդ դեպքում ձեր բախտն էլ կբերի՝ դուք էլ կփրկվեք:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am